

Վ.Գ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՀԱՍԵՍԱՏԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ

1

Երևան 1998



ԱՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ETYMOLOGICAL STUDIES

ՅԱԳԻ ԽՈՎՅՈՒՅՆ

ARMENIAN NATIONAL ACADEMY OF SCIENCES  
H.ADJARIAN INSTITUTE OF LINGUISTICS

V.G. Hambardzumian

Essays on comparative Lexicology  
of the Armenian Language

1

Yerevan 1998

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ.Ա.ԲԱՌԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒԵՏ

Վ.Գ.Համբարձումյան

Ակնարկներ հայոց լեզվի  
համեմատական բառագիրության

A 4/84704

1

Երևան 1998

ԴՏՀ 809.198.1

ԳՄԴ 81.2Հ-3

Հ-205

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ.  
լեզվաբանության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր  
ակադեմիկոս Գ.Բ.Զահոնկյան

Համբարձումյան Վ.Գ.

Հ-205

Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության/  
(Պատ. խմբ.՝ Գ.Բ.Զահոնկյան), -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,  
1998.- 68 էջ:

Աշխատությունը նվիրված է հայոց լեզվի պատմության և  
համեմատական լեզվաբանության առանձին հարցերի:

Ներկայացվում են հայոց լեզվի պատմության առավել  
արդիական խնդիրները, հայերենի պայքական բաղաձայնների  
տեղաշարժի ենթարկված երևույթների վիճակագրությունը, տրվում են  
հ.-ե. ծագման հայերեն (բարբառային) բառերի նոր, ինչպես նաև  
վերանայվող ստուգաբանություններ:

Գիրքը նախատեսված է բանասերների, պատմաբանների և  
առհասարակ հայերենի ու հայ ժողովրդի հին շրջանի պատմությամբ  
հետաքրքրվողների համար:

Հ. 4602020100 98 թ.  
703(02) -98

ԳՄԴ 81.2Հ-3

©ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց լեզվի պատմության կարևորագույն մի քանի հարցեր այստեղ քննության են առնվում առանձին-առանձին, և դրանց լուծումը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել ոչ միայն լեզվի պատմության, այլև պատմական բերականության և համեմատական բառագիտության տեսանկյունից:

Հայերենագիտական նոր հետազոտությունների գրավական կարող է լինել այն, թե այդ բնագավառում նախկինում կատարված աշխատանքը որքանով է հնարավորություն լմծելում հետազայտմավելի լայն ու ծավալուն ուսումնասիրությունների ձեռնարկելու համար: Մինչև այժմ երևան եկած աշխատություններում նշված են նաև այն ուղիները, որոնցով պիտի ընթանա հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունը նոր պայմաններում:

Սույն աշխատանքում ամփոփ ներկայացվում են հայոց լեզվի հին շրջանին վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները: Դրանց զգալի մասը լույս է տեսել գիտական առանձին հոդվածների, տարրեր բնույթի գիտաժողովներում կարդացված գեկուցումների դրույթների ձևով, իսկ մյուս մասը լույս է տեսնում առաջին անգամ:

Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է հայոց լեզվի պատմության կարևորագույն մի քանի խնդիրների քննարկմանը: Այդ խնդիրների լուծումը ենթադրում է հայերենի տարրեր կարգի փաստերի ավելի ծավալուն և մանրանասն ուսումնասիրում, ինչպես նաև հայոց լեզվի տարրեր շրջանների պատմությանը վերաբերող լեզվաբանական և հարակից գիտական ուսումնասիրությունների նորագույն տվյալների օգտագործում:

Երկրորդ գլուխը վերաբերում է հայոց լեզվի պատմության առումով մեծ կարևորություն ոնեցող մի երևոյթ՝ հ.-ե. պայքական բաղադայնների մինչև այժմ հաստատված հայերեն արտացոլումների, այսպես կոչված, վիճակագրությանը: Եվ վերջինս ցույց է տալիս, որ այդ երևոյթը ոչ լիարժեք ձևով է արտացոլված հայերենում: Ըստ այս առաջնահերթ խնդիր է դառնում հայերեն չստուգաբանված, ինչպես նաև ոչ վստահելի ստուգաբնություն ունեցող բառերին առաջիկայում ձեռնամուխ լինելը, որը կարող է նոր փաստեր տրամադրել հիշյալ երևոյթի մասին ավելի ամբողջական պատկերացում ունենալու համար:

Երրորդ գլխում տալիս ենք հ.-ե. ծագման հայերեն որոշակի թվով բառերի ատուգարանությունը, որոնք նախկինում կամ ամենելին չեն ստուգարանվել, կամ ունեցել են մոտավոր, կասկածելի ստուգարանություն: Այս պարագայում օգտագործված են հ.-ե. լեզուների համեմատական ուսումնասիրության վերջին ժամանակներս հայտնի դարձած տվյալները, որոնք համադրել ենք ավանդաբար գոյություն ունեցող տվյալների հետ: Հ.-ե. ծագման հայերեն բառերի ստուգարանությունն ինչ-որ չափով լրացնում է հայերենի բնիկ բառապաշարի բառիմաստային (թեմատիկ) խմբերը՝ կապված հատկապես այս կամ այն բնագավառի հետ:

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս Գ.Բ.Զահուկյանին՝ աշխատության ձեռագիրը կարդալու և մի շարք արժեքավոր դիտողություններ անելու համար:

# ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունն անցել է որոշակի ուղի և ունեցել ակնառու ձեռքբերումներ: Սակայն դեռևս կան զգալի բվով խնդիրներ, որոնց լուծումը հայերենագիտության զարգացման ներկայիս փուլում խիստ արդիական է, ուստի անհրաժեշտ է շարունակել աշխատանքն այդ խնդիրների լուծման ուղղությամբ [Խմնո. Համբարձումյան 1995, 92-99]:

Հայերենն, իբրև հ.-ե. ցեղակցության լեզու, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Առաջավոր Ասիայի հնագույն, ինչպես նաև հ.-ե. մյուս լեզուների ծագումնային և տիպարանական ուսումնասիրությունների մեջ: Այն ընդգրկում է լեզվական, այսինքն՝ հնչույթային, բառային, ձևաբանական և այլ կարգի երևույթներ, որոնք ա) աչքի են ընկնում իրենց հնությամբ (արխահիկությամբ), քանի որ մինչև այժմ հնարավոր է եղել բացահայտել պատմահամեմատական (ստուգաբանական) հետազոտություններում, բ) վկայում են ցեղակից և շրջակա (հարևան) լեզուների հետ տարբեր ժամանակներում ունեցած սերտ շփումների մասին, թեև վերջիններս մինչև օրս ոչ լիարժեք շփով են ուրվագծված, գ) ներկայացնում են ավելի մեծ բվով համեմատելի փաստեր և տիպարանորեն առանձնանալի իրողություններ, քանի որ ցարդ հայտնի են կամ հաստատվում են համապատասխան ուսումնասիրությունների տվյալներով:

Ըստ այդմ՝ գնալով ավելի է մեծանում հետաքրքրությունը հայերենի այդ կարգի երևույթների նկատմամբ, և այս հանգամանքը շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

2. Հայոց լեզվի պատմությունն առհասարակ ունի հետազոտության համեմատաբար լայն շրջանակ և որոշակի ընդգրկում՝ կապված նրա հնչույթային և ձևաբանական համակարգերի, բառապաշարի բավականին հին շերտերի, գրական և խոսակցական տարբերակների, զարգացման տարբեր փուլերում երևան եկած գրական լեզուների և դրանց խոսակցական (բանավոր) հիմքերի ու բարբառների փոխարարերության, ինչպես նաև նախագրային

Ժամանակաշրջանի և գրավոր շրջանի դեպքում հաղորդակցական որոշակի տարբերակվածության հետ: Վերջիններս ըստ Էռլյան բնութագրվում են զարգացման ժամանակային, տարածքային և գործառական հատկանիշներով:

3. Հայոց լեզվի պատմությունը ժամանակագրորեն բաժանվում է երկու մեծ ժամանակաշրջանի՝ նախագրային (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից մինչև մ.թ. 4-րդ դ. Վերջը) և գրավոր կամ «գրային» (մ.թ. 5-րդ դ. առ այսօր) [Hübschmann 1883, 1895-1897, Աճառյան 1940-1951, Զահուկյան 1987]: Վերջին տարիներին կատարվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենը և նրան առավել մերձավոր համարվող լեզուները (հունա-հայա-հնդիրանական բարբառային մերձավորություն) հ.-ե. ընդհանրությունից բաժանվել են անատոլիական լեզվական մերձավորության հետ միաժամանակ (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ և նոյնիսկ ավելի վաղ) [Ղամկրելիձե, Իվանով 1980, 1981, 1984, Ներօնակ 1981, 24]: Հայերենի պատմության դեպքում երկու ժամանակաշրջանի առանձնացումը պայմանավորված է հետևյալ հաճախանաբներով. այսոյն պատմությունը, անկախ գրավոր հուշարձաններով ավանդված չինելու կարևորությունից, զայխ է գրեթե անհիշելի ժամանակներից, այլ կերպ ասած՝ հ.-ե. լեզուների ընդհանրության շրջանից, երբ ցեղակից բարբառները կամ բարբառային խմբերն սկսում են աստիճանաբար տարբերակվել, սակայն դեռևս ամբողջովին տրոհված չեն, թ) առանձնանալով հ.-ե. ցեղակցության այդ խմբից (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ, երբ տեղի է ունենում առաջին տրոհումը, այն է՝ անատոլիական, հնդիրանական, հունական և հայկական)՝ հայերենը, իրքև առանձին կամ կենտրոնական ցեղակցության մի բարբառ, բռնում է ինքնուրույն լեզու դառնելու ուղին (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ, որը հաջորդում է հ.-ե. լեզուների առաջին տրոհմանը), գ) համեմատաբար նոր ժամանակներում, հատկապես մ.թ. 5-րդ դ. սկսած (մեսրոպյան գրերի գործադրման պայմաններում), իրքև նոր գրավոր լեզու, հայերենն ենթարկվում է տարբեր ժամանակներում երևան եկող մշակման ու նորմափորման, ինչպես նաև զարգացման տարբեր փուլերում հանդես է զայխ որպես իին, միջին և նոր գրական լեզու՝ իր բազմաթիվ բարբառներով և գործառական տարբերակներով հանդերձ:

Ժամանակային նման բաշխումը լայն ընդունելություն է գտել հայերենագիտության մեջ, և այն վերանայելու հիմքերը դեռևս կարող են խախուս լինել [Զահուկյան 1987, 20-26]: Դժվար չէ նկատել, որ

այս պարբերացումը պայմանավորված է մ.թ դ. (405 թ.) մեսրոպյան գրի և համապատասխան գրականության ստեղծման հանգամանքով: Խոկ վերջինս խիստ պայմանական է, որովհետև հիմնված է առանձնապես մշակութային մեծագույն տեղաշարժերի վրա, և քիչ չափով են ուշադրության առարկա հանդիսանում գրավոր խոսքի զարգացման չափերի ու տեմպերի հետ կապված հանգամանքները:

3.1. Հայերենի նախագրային շրջանի պատմությունն ավելի դժվար ուսումնասիրելի բնագավառ է: Այստեղ խիստ տարրեր, նույնիսկ հակասական են հայերի հետ շփված ժողովուրդների լեզվով ավանդված գրավոր (վիմագիր) աղբյուրների տվյալները, որոնք հաճախ աշջի են ընկենում միակողմանիությամբ: Այնուհետև, առկա են նաև սեպագրերի և այլ կարգի գրերի վերծանության և մեկնարանան հետ կապված դժվարություններ: Այնինչ գրավոր շրջանի պատմությունը բավականին միօրինակ է, գրավոր խոսքի առումով՝ զգալիորեն միանշանակ, հասկանալի ավանդույթով ամրագրված: Ավելին, նախագրային շրջանը բնութագրվում է լեզվական իրողությունների ծագումնային և տիպարանական անմիասեռությամբ, և այդպես կարելի է դատել մեզ հասած տարրեր կարգի գրավոր հուշարձանների տվյալների հիման վրա: Այնինչ հայերենի գրավոր շրջանի պատմությունը հանդես է բերում կառուցվածքային և տիպարանական փոքրիշատե կուր միասնականություն: Դա հիմնականում պայմանավորված է հին գրական հայերենի, հետագայում՝ գրաբարի առաջ բերած գրավոր այն ավանդույթով, որի անկասելիորեն ընկենում է թե՛ ոչ շրջանի և թե՛ ինչ-որ չափով նաև կարելուրագույն (մեծ տարածք ընդգրկող) բարբառների հետագա զարգացման հիմքում: Ուստի այն, ինչ նախագրային շրջանում կրում էր «Եկամուտ բաղադրիչներ, շփումներ և փոխազդեցություններ» անունը ի հակադրություն «հիմնաշերտերի» [Զահուկյան 1987, 257-293, 382-417], գրավոր շրջանում այդ երևոյններն անվանվում են փոխառություններ, ընդ որում հիմնականում այլ լեզուներից հայերենի կատարած փոխառություններ, և ոչ թե հակառակը:

3.2. Նախագրային հայերենի պատմությունը ժամանակագրուեն բավականին երկար է: Խոկ ծագումնաբանութեն և փոխազդեցությունների տեսակետից այն դեռևս ամբողջովին չի պարզաբանված, ինչպես նաև տիպարանորեն ըստ ամենայնի չի մեկնարանված: Ծիշու է, որոշակի գծերով առանձնացվում է հ.-ե. լեզուների հետ հայերենի ունեցած առնչությունների տիպարանական նկարագիրը,

սակայն դրանց կողքին զգալի տեղ ունի այլ լեզուների ներդրումը: Ըստ այդ առաջ են քաշվել տարբեր կարգի «տեսություններ» հայերենի բնույթի, ցեղակցության աստիճանի, տիպարանական նկարագրի և շրջակա լեզուների հետ նրա ունեցած առնչությունների վերաբերյալ: Այս առումով, կարելի է ասել, զրեք շրջադարձային են Գ. Զահուկյանի ուսումնասիրությունները [Դյաւկյան 1960, 1963, 1964, 1967, 1982, 1982 և այլն, Զահուկյան 1970, 1972, 1987 և այլն]: Եվ երեւ այսօր հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում կան շատ անելիքներ, ապա դրանք ամենից առաջ պիտի հիմնված լինեն լայն ընդունելություն գտած ձեռքբերումների վրա, որպեսզի հնարավոր լինի ընդլայնելու և խորացնելու այդ բնագավառն առհասարակ:

Այնուհետև, այդ շրջանի պատմությանը վերաբերող հետազոտությունները մեծ մասամբ հնույթաբանական և տիպարանական, այլև արմատի և բառաձևերի (ձևաբանական) բնություն են: Բավականին քոյլ է հետազոտված հայերենի համեմատական շարադարձությունը, հ. եւ. լեզուների հետ առնչվող հայերենի նախադասության և խոսքի երևույթն ընդհանրապես [Խմնտ. Meillet 1962, Benveniste 1969]:

Վերջին տարիներին լայն աշխատանք է ծավալվել հ. եւ. լեզուների համեմատական իմաստաբանության բնագավառում, որտեղ այս կամ այն շափով օգտագործված է նաև հայերենի նյութը: Այդ նյութը հաճախ վճռական դեր ունի հնդեվրոպացիների լյաների այս կամ այն ոլորտին վերաբերող պատկերացումների ուրվագծման և ամբողջացման գործում [Benveniste, 1969, Գամկրելիձե, Իվանով 1984]: Ավելին, այսօր անհրաժեշտ է այդ կարգի ուսումնասիրություններում մեծ շափով օգտագործել նաև հայերենի դեռևս ուշադրության ուղարկա շղարձած տվյալները. օրինակ՝ հուն. նիւոն կնկլօս «արեի ակ՝ անիվ» և հայ. արեգ-ակմ «արև» [Խմնտ. Ներօնակ 1981, 30]:

Նախագրային շրջանի պատմությունը ևս ենթադրում է զարգացման որոշակի փուլեր: Դրանց առանձնացումն այսօր պահանջում է ուսումնասիրության նոր մեթոդների գործադրում: Մինչև այժմ արված փորձերը եղել են երկու կարգի. դրանք վերաբերել են լեզվական այս կամ այն մակարդակի երևույթների ժամանակագրությանը, ինչպես նաև ամբողջական շրջանաբաժանման դեպքում մասմակիորեն են օգտագործվել լեզվական փաստերը [Խմնտ. Hübschmann 1898, 128-172, Fourquet 1948, Zabrocki 1951, Աղայան 1961, 67-90, Դյաւկյան 1967, 313-332, Զահուկյան 1987, 20-33]

և այլն]: Կարծում ենք, որ այսօր խիստ անհրաժեշտ է հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության համակողմանի շրջաբաժանման խնդիրը: Առանց այդ շրջանի ներսում առանձին փուլերի ամրողական, լեզվական լայն տվյալների՝ վրա հիմնված պարբերացման բավականին ոժվար է, գրեթե անհնարին է ըստ ամենայնի պատկերացնել հայերենի, իբրև հ.-ե. ցեղակցության լեզվի, ոչ միայն ինքնուրույն զարգացումը, այլև շրջակա լեզուների հետ ունեցած շփումները: Այդ փուլերի առանձնացումը սերտորեն կապվում է հնդեվրոպական միասնության, հայ-հնդիրանահունական բարբառային միասնության, հյուսիսկովկասյան (ընդ սմի՛ խուսառութարտական) վաղ ազդեցության և իրանական բառապաշտարային ինտենսիվ ազդեցության հետ (Խմնտ. Իվանով 1984, 61-62):

Վերջին տարիներին լայն քննարկման է դրվում հայերենի հնագույն հ.-ե. բաղաձայնական գծեր ունենալու հարցը: Դա ամենից առաջ վերաբերում է պայրական բաղաձայների համակարգին [Гамкрелидзе 1984, 31-34, Գամքրելիձե, Իվանով, 1984, 44-49, Haudricourt 1975]: Ընդ որում նշվում է, որ հայերենի բաղաձայնական համակարգն ավելի մոտ է կանգնած հ.-ե. նախալեզվի համար Վերականգնվող համակարգին, ուստի թերևս պետք է վերանայել հայերենում «քաղաձայների տեղաշարժի» վերաբերյալ ավանդական մոտեցումը [Гамкрелидзе, Իվանով, 1984, 44-46]: Եվ առաջ է քաշվում հայերենում հ.-ե. «կատկային» կամ «ձայնածերպային» (զլոտալ) բաղաձայնների անմիջական արտացոլման վարկածը, որն ենթադրում է հայերենի բաղաձայնների նորովի բնութագրման անհրաժեշտությունը: Այս դեպքում նկատի են առնված հատկապես հայերենի նոր բարբառների տվյալները, այն է՝ շնչել ձայնեղների կողքին «մաքուր» ձայնեղների՝ իբրև մեկ հնչույթի տարբերակների հանդես գալը [Խմնտ. Գամքրելիձե, Իվանով, 1984, այլև Շիրոկօվ 1972, Ներօնակ 1981, 39-40]: Այսուհետև, նկատելի է, որ հայերենում առկա բաղաձայնական մյուս կարգի փոփոխություններն ու արտացոլումները (օրինակ՝ քմայնացում, տեղաշարժ, կիսաշփականների և ձայնորդների վերաբաշխում և այլն) առաջ են բերել ոչ միայն որոշակի հնչույնական օրենքներով գործող բաղաձայնների՝ հ.-ե. նախնական ձևերի հետ ունեցած համապատասխանությունները, այլև բազմաթիվ բացառություններ (շեղումներ ընդհանուր օրենքներից՝ տեղիր տալով տարբեր կարգի գուգածնությունների [Джакայք 1984, 146-160 և այլն]: Այսպես, հայտնի է, որ հայ. շում և

սկունդ «շնիկ, շուն» բառերը ծագում են հ.-ե. \*կ'չոն, \*կ'չոն-տօձևերից: Հայտնի է նաև, որ հ.-ե. հնչյունախումբը մի դեպքում տվել է հայ. շ, իսկ այլ դեպքում սկ- [հմմտ. Աճառյան 3, 1977, 534-535, 4, 1979, 230-231, Szemerényi 1964, Ջայութ 1967, 189, 228, Զահորյան 1987, 134 և այլն]: Այնուհետև, ունենք հայ. երկան «աղաց, երկան» բառը, որը ծագում է հ.-ե. \*կ'րաց- «աղաց» արմատից [հմմտ. Աճառյան 2, 1973, 61, Ջայութ 1967, 226, Գամկրելիձե, Իվանով, 1984, 693]: Կարծում ենք, որ նոյն արմատից է բխում նաև հայ. բրբ. տոն-ել «խոշոր աղալ, հատիկը երկու կտոր անել» բառը՝ արմատակազմից հնչույթներից երկուսի դրափոխությամբ [տես Համբարձումյան 1996, 191-192]: Երկու օրինակում էլ գործ ունենք հնչյունափոխական այնպիսի երևույթների հետ, որոնք գործելիս են եղել տարբեր ժամանակներում: Եվ ինչպես այս, նույնպես և միևնույն արմատից բխող այլ կարգի բառերի զուգահեռ առկայությունը հայերենում հավաստում է դրանց ծագումնային տարածամանակյա դրսերումների մասին: Դա այդպես է, որովհետև դրանցում, ինչպես և այլ կարգի բաղաձայնական փոփոխությունների ենթարկված հայերեն զգալի բվով բառերում երևան են գալիս հնչյունական տարբեր օրենքներ, այլ կերպ ասած՝ դրանք հետևանք են տարբեր ժամանակներում գործելիս եղած հնչյունական օրենքների նման բառերի ծագումնային մեկնաբանությունը և ժամանակագրությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը այս կամ այն ժամանակային կտրվածքում կարելի է դիտել իբրև գործուն օրենքների դրսերման արդյունք, իսկ մյուս մասը՝ շեղումներ կամ բացառություններ այդ օրենքներից: Խնդիրն այն է, թե օրենքները գործել են նո՞յն ժամանակաշրջանում, հայերենի զարգացման նո՞յն փուլում, և դրանք արդյունք են իրարից տարբեր երևույթների, թե՞ դրանք հնչյունական զարգացման առումով հաջորդել են միմյանց:

Վերև ասվածը կարող ենք տարածել այն դեպքերի վրա, երբ հայերենի մեջ առկա են պարզ և քնայնացած կամ շնչելացած բաղաձայններով բառերի տարբերակներ, ընդ որում իմաստային որոշակի տարբերակվածությամբ [հմմտ. Ջայութ 1967, 300-313, Գամկրելիձե, Իվանով 1984, 42-43]:

Ուստի կարծում ենք, որ հայերենի հնագույն շրջանի պատմության փուլերի առանձնացումը պիտի լիովին հենված լինի լեզվական պետի մեծ բվով փաստերի վրա, իսկ արտաքին հանգամանքները (փաստերը) պիտի խաղան ածանցյալ դեր: Ավելին, լեզվական փաստերը պետք է մշակել խորությամբ, այսինքն՝ դրանք

պիտի ենթարկվեն ներքին վերականգնման, արտաքին համեմատության, տիպարանական զուգադրության և սրանց հետ առնչվող մերողների գործադրմամբ կատարվող վերլուծությունների, իսկ եթե անհրաժեշտ է, ապա թերևս հարկ լինի մշակել նոր մերողներ, որոնք եղածների հետ նորովի կծառայեն երևույթի ավելի խորը և համակողմանի քննությանը: Եվ նման մոտեցումն, աճշուշտ, կնպաստի հնագույն շրջանի հայերենի ժամանակային ավելի իրական դասակարգմանը, ինչպես նաև լեզվի պատմության ամբողջական նկարագրությանը:

Հայոց լեզվի պատմության փուլ առ փուլ ուսումնասիրությունը մերողապես անհրաժեշտ է, որի պայմաններում կրացառվեն ամեն կարգի ենթադրությունների և «տեսությունների» վրա հիմնված, այլև տարաքնույթ վարկածների ձևով ի հայտ եկող տեսակետներն ու պատկերացումները:

3.3. Հայերենի գրավոր շրջանի պատմությունն, ինչ խոսք, ավելի հետևողական ձևով է բաժանված փուլերի: Այսօր գրեթե միասնաբար ընդունվում է, որ այդ շրջանն ունի երեք փուլ՝ իին, միջին և նոր, ըստ որում գրական և ոչ-գրական, այլև միջյանց հաջորդող տարրերակ-ներով (ենթափուլերով) [Զահուկյան 1956, 1964]: Այստեղ շրջանաբաժանումը կատարված է համեմատաբար լայն ընդգրկումով, այսինքն՝ նկատի են առնված ոչ միայն արտաքին հանգամանքները, այլև բուն լեզվական փաստերը:

Այս շրջանաբաժանման մեջ, այնուամենայնիվ, նկատելի է այս կամ այն ենթափուլի առանձնացման միակողմանիություն: Այսպես, միջին գրական հայերենը, որ ներառում է երկու ենթաշրջան, ընութագրվում է իրեն կիլիկյան հայերենի վիճակ, այսինքն՝ հստակ չէ, թե նման առանձնացման դեպքում հաշվի է առնված միայն կիլիկյան միջավայրի՝ գրական լեզուն, թե՝ ողջ հայերենն՝ իր գրական գործառության բոլոր ոլորտներով, տարածական տարրերակներով և այլն: Կարծում ենք, որ այս տեսակետից կարիք կա երևույթն ավելի ամբողջական ձևով ուսումնասիրելու, մանավանդ որ գրական հուշարձանների տվյալները տալիս են այդ հնարավորությունը:

Այսուհետև, գրավոր շրջանի սկզբից մինչև մեր դարի 20-ական թթ. գործառում է իին գրական հայերենը (գրաբարը՝ մերը իրեն բուն, միակ և մերը իրեն երկրորդաբար, նոր առաջացածին զուգահեռ գործառող գրական լեզու): Այս դեպքում առավել ուշադրություն պետք է դարձնել իին գրական հայերենի, այլև սրա հետ հետազայտմ գործածված ընդհանուր գրաբարի, ինչպես նաև գրաբարի և միջին ու

նոր գրական հայերենի առնչությունն ու փոխազդեցությունը [հմմտ. Համբարձումյան 1990]: Վերջիններիս հետ կապված խնդիրների լուծումը պիտի հիմնված լինի լեզվական նոր փաստերի, գրավոր հուշարձանների նոր տվյալների վրա: Այսպէս, օրինակ, նոր գրական հայերենը, որն այսօր ունի հարուստ բառապաշար, մանավանդ բազմաբնույթ տերմինաբանություն, որոշակի պայմաններում կարողացել է հարստանալ նոր շրջանի (հատկապես 18-19-րդ դդ.) գրաբարի հետ ունեցած առնչությունների պայմաններում: Թե՛ միջին գրական հայերենը, թե՛ հատկապես նոր գրական հայերենն իր երկու տարրերակներով մշտապես հարստացել ու կատարելագործվել են հին գրական հայերենի, միջին դարերում գործառած գրաբարի հետ ունեցած սերտ շփումների պայմաններում, կարողացել են մշակվել ու նոր մակրովել գրաբարի օրինակով [Նոյյան տեղում, 62-127, այլև 128-261]:

Վերջապես, կարևոր է նաև նոր գրական հայերենի ներաշրջանների առանձնացման հարցը՝ կապված վերջին ժամանակներս երևան եկած ուսումնասիրությունների տվյալների օգտագործման հանգամանքի հետ: Լեզվական երևույթների նոր ուսումնասիրությունն, անշուշտ, ենթադրում է այլ փուլերի ճշգրտում, որովհետև եղած պարբերացումներն ավելի մեծ չափով հենված են եղել լեզվի զարգացման արտաքին հանգամանքների, մանավանդ լեզվի հարցերում «գրապայքար» կոչված երևույթի մեկնարանության վրա:

4. Հայոց լեզվի պատմության արդիական խնդիրներից մեկն էլ նրա տարածական տարրերակների ուսումնասիրությունն է: Հայերենի բարբառների ատլասի կազմումը, որին նախորդել է ըստ ծրագրի նյութերի հավաքումը, մեծապես օգուտ է բերելու հայոց լեզվի պատմության նոր փուլի համակողմանի ուսումնասիրությանը:

4.1. Այս տեսակետից միանգամից դժվար է լուծել այն հարցը, թե հայերենն, իբրև հ.-ե. ցեղակցության լեզու, որտեղ է տրոհվել նախալեզվից, այլև ինքնուրույն զարգացման ընթացքում ինչպիսի լեզուների հետ է շփումների մեջ եղել: Հիշյալ հարցերը մշտապես եղել են հայերենագետների ուշադրության առարկան: Տարբեր ժամանակներում երևան են եկել միմյանցից զգալապես տարրերվող մուտցումներ դրանց լուծման առումով: Վերջին ժամանակներս, հատկապես հ.-ե. լեզուների ուսումնասիրության բնագավառում բոլորովին նոր մուտցում է հանդես բերվում, որի համաձայն հ.-ե. լեզուների նախահայրենիքը պետք է տեսնել ոչ այլ ուրեք, քան առաջապրասիական տարածքում [Ներօնակ 1981, 25, Գամկրելիձե, Իվանով 1984, 859-957, 890]: Հայտնի է, որ հ.-ե. լեզուների տրոհումը

տեղի է ունեցել, ինչպես ասացինք վերը, մ.թ.ա. 4-րդ հազարամյակում, որից և սկզբ է առնում առանձին լեզուների (քարքառախմբերի), ընդ որում հայերենի ինքնուրույն զարգացումը, այսինքն՝ որպես առանձին լեզու գործառելը և ինքնուրույնաբար շփվելը շրջակա լեզուների հետ: Ուստի անհրաժեշտ է կամ հերթել այս նոր մոտեցումը, եթե այն դիտվի զորկ գիտական հիմքերից (որն արդեն բավական դժվար է, թերևս կարելի լինի խոսել, այդ մոտեցման հետ կապված, հայերենին տրվող դերի ավելի մանրամասն ձևով ներկայացնելու մասին), կամ այդ մոտեցումը զարգացնել և ըստ այդմ նորովի մոտենալ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության այն խնդիրներին, որոնք առնչվում են նրա ներքին (լեզվական) կողմներին, ինչպես նաև հարևան ժողովուրդների հետ ունեցած տարածքային շփումներին: Չատ կարևոր է, որ այդ շփումները երևան քերպեն ոչ թե առանձին փաստերի, այլ վերջիններիս ամբողջական, համադրական քննության ձևով [Խմնու. Djahukian 1985, 151-160, 1990, 1-16, 1997, 45-66]:

4.2. Գրավոր շրջանում և հայերենը գործառել է ոչ միօրինակ ձևով՝ կապված անկախ պետականության կորստի, հարևան ժողովուրդների պատճառած տարբեր կարգի ճնշումների հետևանքով տեղի ունեցած տեղաշարժերի, բուն բնակատեղին ստիպված լրելու փաստերի հետ: Իսկ այդպիսին հայոց լեզվի պատմության մեջ բազմից նկատելի է: Եվ լեզվի պատմությունն առանց համապատասխան երևոյթների վրա ազդող նման հանգամանքների գրեթե անհնարին է պատկերացնել:

«Մեսրոպյան հայերեն» շրջանում մեզ է ավանդվում իին գրական լեզուն իր նախնական տեսքով, սակայն նրանում գրեթե անհնարին է առանձնացնել տարածքային տարբերակված գծեր, թեև վերջիններս տեսականորեն չեն բացառվում: Դա այդպես է, որովհետև իին գրական հայերենը, որ մշակվում էր հայ և օտար քարգմանիշների ձեռքով, բանավոր ընթերցումների («մեկնումների») ուժով ստեղծված ավանդույթով, պահպանում էր իր գրական կանոնականությունը: Եվ այդ պայմաններում խիստ դժվար էր ժամանակի խոսակցական լեզվի առանձնահատկությունները գտնելը: Դիշտ է, այդպիսի գծեր նկատվել են հայերենագետների կողմից [Այտընյան 1866, Աճառյան 1951, Զահուլյան 1972 և այլն], սակայն Ս.Գրբում, ինչպես նաև 5-6-րդ դդ. քարգմանական այլ երկերում փորձիշատե նկատելի են քարգմանիշների «մայրենի քարքարի» ինչ-ինչ գծեր ու երևոյթներ: «Նոր բազիքիք հայկագեան լեզուի» (1-2, 1836-1837) բառապաշտի ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունն

ավելի մեծ հնարավորություն է տալիս՝ հաստատելու, որ իին գրական հայերենն ուներ որոշակի բարբառային իիմք, ավելին՝ կային գրական հայերենի կողքին տարածքային տարրերակներ (բարբառներ), որոնց միջանցյալ շփումների հետևանքով ստեղծվել էր այսպես կոչված մի լեզվակիճակ (կոյնե), որի իիման վրա և բարձրանում է իին գրական հայերենը՝ իբրև գրավոր լեզվի հաղորդակցական հնարավորություն։ Այդ ձևերն են, որ հետագայում հանգեցրել են լեզվական նոր որակի՝ միջին հայերենի համակարգին։ Եվ այս առումնվ էլ հայերենի գրավոր շրջանի պատմությունը դառնում է միանգամայն ուշագրավ, մանավանդ միջին հայերենի գրական և բարբառային տարրերակների առնչության հարցում։

4.3. Հայերենի տարածքային տարրերակվածությունն ավելի է խորանում հետագայում, կամ դա այդպիսին է, որովհետև ա) գրավոր առյութներով վկայվում են տարածքային (բարբառային) բազմարիվ ձևեր ու «շեղումներ» գրական լեզվի ընդհանուր ստանդարտից, թ) վերջիններիս ուսումնասիրությունը կատարված է բավականին մանրամասն ձևով՝ կապված միջին գրական հայերենի նորմավորման իիմքի պարզաբանման և հետագայում բարբառներին առանձին, հատուկ ուշադրություն դարձնելու հանգամանքների հետ։ Իսկ նոր շրջանում, բնօրրանից հեռու գտնվող գաղրօջախների և կրթական հաստատությունների գոյությամբ պայմանավորված, մեծանում է հայերենի բարբառների թիվն այն աստիճան, որ նախորդ դու հայերենը շտներ տարածքային այնպիսի գծեր, որպիսին հանդես են քերում ոչ միայն բարբառները, այլև առանձին խոսվածքները։ Դրանց ընդհանուր տեսական, ինչպես նաև դրանցից շատերի մենագրական ուսումնասիրությունն այսօր պատկառանք է ներշնչում։ Սակայն այսօր նոր գրական հայերենի այդ բնագավառի հետազոտության մեջ առաջնային է դարձել տարածքային նման տարրերակների բարտեզագրությունը։ հայերենագիտության մեր օրերի կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է հայերենի բարբառների ատլասի կազմումը՝ ըստ նախատեսվող ծրագրի։ Այդ բնագավառում պահանջվում են զիտական անդուլ ջանքեր, և այդ նպատակով խիստ անհրաժեշտ է հանդես բերել որոշակի նպատակասլացություն։

Հայերեն նոր գրական լեզվի և արդի բարբառների առանձին, այլև քարտագրական ու քարտեզագրական ուսումնասիրությունը մեծապես կարող է ամբողջացնել մեր պատկերացումները հայ ժողովրդի մոտիկ անցյալի, ինչպես նաև ներկայիս վերաբերյալ։ Հայերենի բարբառների զիտական հետազոտությունը իիմք է

հանդիսանալու նոր գրական լեզվի հետագա կանոնարկման համար, իսկ վերջինս այսօր շատ արդիական է:

5. Հայոց լեզուն զարգացման բոլոր փուլերում ունեցել է գործառական որոշակի հատկանիշներ, որոնք ժամանակ առ ժամանակ փոփոխվել են, սակայն որպես մեկ ամբողջություն՝ հատկանշում են բազմադարյան մշակույթ ունեցող մի հանրության լեզվական մտածողությունը, մշակութային, գիտական և հասարակական-քաղաքական առնչությունները:

5.1. Հնագույն շրջանի հայերենը, որը ներկայացնում է բնիկ ու փոխազդեցության հետևանքով առաջ եկած որոշակի բառապաշար, ինչպես նաև հնյունական համակարգ, քերականական կառուցվածք, տարրեր բնույթի հետազոտության առարկա է եղել նաև լեզվական այդ երևույթների գործառական կողմով: Այսպես, բառապաշարի այն շերտը, որը պահպանել է հայերենը հ.-ն. լեզուներից բաժանվելուց հետո, տարրեր կարգի ուսումնասիրություններում դասակարգվում է ըստ իմաստային (քեմատիկ) խմբերի, այլ կերպ ասած՝ գործառական ոլորտների հստակ առանձնացումով [Խմն. Աճայշան 1940, 108-113, Ջայութակ 1967, 1987, Գամկրելից, Իվանով 1984 և այլն]: Այստեղ նեզ հետաքրքրող հետևյալ խնդիրն է: Հայերենում առկա է չսուլգարանված բառերի մի առվար քանակ, կան նաև բարբառային բառեր, որ չկան հայերենի արճատական կամ գրական լեզվին վերաբերող բառարաններում, և դրանց հետագա ստուգարանությունն ու ըստ բառիմաստային (քեմատիկ) խմբերի դասակարգումը մեծապես կարող է օգնել նրանց իմաստային (բովանդակային) կողմի լիարժեք բացահայտման գործին: Այսպես, վերը նշել ենք, որ հայերկան(r) և սոնել «խոշոր աղալ» բառերի ստուգարանական տվյալները համալրում են, այսպես կոչված, «քննատնտեսություն» բառիմաստային (քեմատիկ) խմբի մի ենթախումբը: Դրանցից հատկապես երկրորդը բարբառային է, ստուգարանելի միայն այդ իմմրի վրա, և այդ դեպքում հնյունական համապատասխանությունից բացի հաշվի է առնվում իմաստային մերձավորությունը առաջինին:

5.2. Հայոց լեզվի թե՛ գրավոր և թե՛ նախագրային (հնագույն) փուլերը, այնուամենայնիվ, հանդես են թերում գործառական ոլորտի որոշակի տարրերություններ: Դրանք լավագույնս նկատվում են բառապաշարի օրինակով, որովհետև վերջինս ավելի արագ է ենթարկվում փոփոխության, քան մյուս մակարդակի երևույթները: Ըստ այդմ, իիս գրական հայերենում երևան են գալիս առավել չափով

կրոնակեղեցական երկեր, կատարվում են միևնույն բովանդակության երկերի զանազան բարզմանություններ, քան միջին հայերենի փուլում: Գեղարվեստական գրականությունն առհասարակ հետազադի. հայերենին բնորոշ դորոշ է: Պատմագրական (պատմագիտական) երկերը գրեթե հավասարապես երևան են զալիս իին, միջին և նոր գրական հայերենի փուլերում (գերազանցապես գրաբարի տեսքով): Միջին հայերենն առավել չափով աշքի է ընկնում բնագիտական, այսինքն՝ բժշկագիտական, մարդակազմական, ձիաբուծության, ինչպես նաև իրավագիտական, առևտրի ու գործավարության և այլն բնագավառներին վերաբերող գրականությամբ: Իսկ նոր գրական հայերենն առհասարակ բնորագրվում է գործառական ոլորտների լայնությամբ. մամուլն ու տպագրական գործն այդ շրջանի երևույթ են:

Հայոց լեզվի պատմության արդի խնդիրներից է ոչ միայն իին և միջին շրջանի հայերենի գործառական ոլորտների ամբողջական, գրական հուշարձանների տվյալների վրա խարսխված նոր ուսումնասիրությունը, այլև դրանց գիտական դասակարգումը՝ ենելով ամենից առաջ լեզվական չափանիշներից: Եվ նոր շրջանի մամուլի լեզուն, որ մեծ դեր է ունեցել արդի գրական հայերենի նորավորման ու կատարելացման գործում, դեռևս քննության չի առնվել իր խորությամբ, եթե չասենք, որ լեզվական նյութի նկարագրության տեսակետից առհասարակ չի եղել ուշադրության առարկա:

6. Հայոց լեզուն, ունենալով երկարատև պատմություն, լինելով առանձին բնագավառի հետազոտության առարկա, անընդհատ մեկնաբանվել, վերլուծության է առնվել իբրև հայ ժողովրդի մտածողության և ինքնության դրսերման ամենավառ արտահայտություն: Այն մշտապես հետազոտվել է իբրև քերականագիտական, բառարանագիտական և լեզվագիտական ուսումնասիրության առարկա: Այդուհանդերձ, հայերենն այսօր պետական լեզու է, և այդ լեզուն այժմ ավելի, քան երբեմն պիտի դառնա խորը և համակողմանի հետազոտության առարկա: Նրանով ավանդված է հսկայական գրականություն, որը լեզվական քննության է առնվել անդուն հետազոտողների ջանքերով: Նոր ժամանակների հայերենագիտության առանցքային խնդիրն է ոչ միայն շարունակել այդ ավանդույթը, այլև այն շարունակել՝ խորացմամբ ու հարստացմամբ հասցնելով գիտական նոր աստիճանի:

# Հ.-Ե. ՊԱՅԹԱԿԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՏԵՂԱԾԱՐԺԻ ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. Հայերենը և հ.-ե. մյուս լեզուները ներկայացնում են հնչույքային համակարգի որոշակի առնչություններ, որոնք հանգեցնում են ոչ միայն ձայնավորների և երկրաբառների (երկինշյունների), այլև բաղաձայնների ծագումնային ընդհանրությունների: Հ.-ե. պայքարական բաղաձայնների համակարգը հայերենում ունի այլ պատկեր, քան ցեղակից լեզուներում: Ըստ Գ. Զահուկյանի՝ դա հետևանք է շորս կարգի պրոցեսների (փոփոխությունների). ա) պայքարականների տեղաշարժ, բ) պայքարականների քնայնացում, գ) կիսաշփականների և ձայնորդների փոփոխություն և դ) բաղաձայնների խմբերի (կապակցությունների) փոփոխություն [Դյայքյան 1967, 74-81]:

Հ.-ե. պայքարական բաղաձայնների համակարգի վերականգնման առումնվ առ այսօր գոյություն չունի միասնական մոտեցում, զիտուրյան զարգացման ընթացքում փոխվել են մոտեցումներն այդ երեսուրի նկատմամբ՝ ձգտելով ավելի լիարժեք և ավելի իրական լինելու: Իսկ առհասարակ դա կապված է երեսուրի հարուցած որոշակի դժվարությունների հետ:

Մինչև մեր դ. 60-ական թթ. կեսերը ընդհանուր ճանաչում էր գտնում ավանդական դարձած բաղաձայնական համակարգը [Brugmann 1904, Դյայքյան 1967, հմմտ. Djahukian 1990, 2-3]: Այս առումնվ Գ. Զահուկյանը նկատում է հետևյալը. «Դասական հնդեվրոպարանությունն առանձնացնում էր երկու տասնյակ պայքարական բաղաձայնից բաղկացած մի համակարգ, որ բնուրագրվում էր ձայնեղների և խուլերի, շնչեղների և ոչ շնչեղների, շրբնայինների, առաջնալեզվայինների և ետնալեզվայինների, ետնալեզվայինների մեջ՝ քնայնացած, սովորական և շրբնայնացած շարքերի առկայությամբ» [Զահուկյան 1987, 37]: Եվ ըստ այդմ հայերենի համար վերականգնում է պայքարական բաղաձայնների մի «սկզբնավիճակ», որում երկու տասնյակի փոխարեն հնարավոր են 16 բաղաձայններ, այսինքն՝ ետնալեզվայինների երեք շարքի փոխարեն առանձնացվում են երկու՝ քնայնացած և սովորական պայքարական-

ների շարքեր, արխահիկ (շրբնայնացած) հնչույթների ընդգրկումով: Ընդ որում այստեղ ևս կասկածի տակ է դրվում «Ետնալեզվայինների երեք շարքերի հնարավորության և սրա հետ կապված՝ քմայնացածների ու շրբնայնացածների հնության, \*b, \*k'հ ու \*k<sup>h</sup>հ հնչույթների գոյության ու գրաված տեղի հարցերը» [Զահուկյան 1987, 37-38]: Իսկ սա նշանակում է, որ հայերենի մինչև այժմ ստուգարաբնված նյութն ոչ ամբողջովին է արտացոլում վերականգնվող համակարգը, այսինքն՝ կան որոշակի բացրողություններ («բաց վանդակներ»): Նշենք, որ այդ կարգի բացրողություններ կան նաև այլ՝ Ետնալեզվայինների շրբնայնացած (արխահիկ) շնչեղ ձայնեղ \*g<sup>h</sup>հ-ի և ձայնեղ \*g<sup>h</sup>-ի, սովորական շնչեղ խուլ \*kh-ի, առանալեզվային շնչեղ խուլ \*th-ի և շրբնային ձայնեղ \*b-ի արտացոլման դեպքում<sup>1</sup>: Այսպիսով, Գ.Զահուկյանի՝ 1967 թ. տպագրած աշխատության մեջ, որտեղ ի մի են բերված մինչև 60-ական թթ. սկզբներն ստուգարաբնված հ.-ե. ծագման հայերեն այն բառերն ու բառարմատները, որոնցում առկա է պայրական բաղաձայնների տեղաշարժի որևէ դրսարրում, վերը նշված բաղաձայնների համար չկան հավաստի օրինակներ, այսինքն՝ դրանք բաց են բոլնված [Դյաւկյան 1967, 82-154, այլև 1982, 45-54]:

2. Վերջին ժամանակներս փորձեր են արվում վերանայելու այդ համակարգը՝ կապված հատկապես պայրականների տեղաշարժի հետ: Դրանք հենվում են ոչ միայն այն հանգամանքի վրա, որ հ.-ե. համակարգի մեջ առանձնացվում են «կատկային» (կամ «ձայնածերպային») բաղաձայններ [հմտ. Hopper 1973, 141-166, այլև 1977, 41-53, Haudricourt 1975, այլև 1978, 123-125, Bomchard 1981, 333-335], ինչպես նաև այն, որ հայերենում և հնարավոր պետք է համարել նման բաղաձայնների գոյությունը [Solta 1963, Kortlandt 1978, 9-16, Գամկրելիձե, Իվանով 1984, 41-45]: Երևոյը բավականին սերտ առնչություններ ունի հատկապես հայ. պայրական բաղաձայնների տեղաշարժի հետ: Ըստ այդմ ենթադրվում է, որ հայերենում գոյություն ունեցող «կատկային» բաղաձայնների շարքն անմիջական արտացոլումն է հ.-ե. նոյնարժեք պայրականների: հմտ. h.-ե. \*t'om> հայ. տում, ոչ թե h.-ե. \*dom> հայ. տոմ, հ.-ե. \*t'ō-> հայ. տամ «տալիս եմ», ոչ թե h.-ե. \*dō-> հայ. տամ և այլն [Գամկրելիձե, Իվանով 1984, 41]: Այդ

<sup>1</sup>Այստեղ և այսուհետև (այս գործի շարադրանքում) հ.-ե. հնչույթների և բառ(արմատ)ների գրությունը տալիս ենք ըստ ավանդական տառադարձության [Դյաւկյան 1967]:

Փորձերի դեմ և ավանդական, այսինքն՝ հայ. տեղաշարժի ենթարկված բաղաձայնների համակարգի օգտին եղել են բավականին լուրջ առարկություններ [Ջայուկյան 1982, 59-67, Djahukian 1990, 1-16]: Խննդիրի լուծմանը մնացած կարող է նպաստել հայ. նոր նյութի ընդգրկումը՝ կապված տեղաշարժին առնչվող օրինաշափությունների և բացահայտ շեղումների հարաբերակցության ճշգրտման, ինչպես նաև դեռևս հայ. չսուզաբանված բառերի ծագումնային բնույթի պարզաբանման հետ: Խսկ այս տեսակետից դեռևս կան շատ անելիքներ, որոնց պիտի նախորդի մինչև այժմ կուտակված նյութի մանրամասն վերլուծությունը համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա [տե՛ս Համբարձումյան 1996, 30-31]:

3. Հայ. պայրական բաղաձայնների տեղաշարժն ընդգրկում է որոշակի օրինաշափություններ և ակնհայտ շեղումներ այդ օրինաշափություններից: Եթե դատելու լինենք մինչև 60-ական թթ. սկզբներին հաստատված հայ. սոսուզաբանված բառերի տվյալներով, ապա կարող ենք նկատել, որ այդ օրինաշափություններն երեքուկես անգամ պակաս են, քան տեղ գտած շեղումները [տե՛ս Ջայուկյան 1967, 86-154]: Մեր հաշվումներով ունենք օրինաշափորեն տեղաշարժի ենթարկված 100 դեպք, իսկ շեղումները կազմում են 347 դեպք: Հ.-Ե. պայրական բաղաձայնների այսպես կոչված անտեղաշարժ արտացոլումը հայերենում բացատրվում է իրքի երկու կարգի երևոյթի՝ սովորական շեղումների և առանձնահատուկ դրանորոշումների հետևանք: Սովորական շեղումներ են դիտվում բնաձայնությունը, բառարմատի կրկնությունը և երկրորդարար հանդես եկող երևոյթները (տվյալ հնչույթի վրա հարեւան հնչույթների ազդեցությունը), և այդպիսի շեղումները կազմում են 20 դեպք: Խսկ առանձնահատուկ դեպքերում երեսն եկած շեղումները բգով 327-ն են, որոնցից 159-ն այնպիսին են, որոնք սովորական ըմբռնումով շեն մտնում բաղաձայնների տեղաշարժի մեջ [նոյյան տեղում, 100-127], իսկ 161-ն առանց տեղաշարժի են արտացոլում հ.-Ե. պայրական բաղաձայնների համակարգը [նոյյան տեղում, 128-153], այլև 7-ը հետևանք են երկրորդ տեղաշարժի [նոյյան տեղում, 153-154]:

4. Հայտնի է, որ հայերենում պայրական բաղաձայնները տեղաշարժի են ենթարկվում բառի կամ բառարմատի 4 կարգի դիրքերում՝ բառասկզբում ձայնավորից առաջ, ձայնավորների միջև, բաղաձայններից հետո և բաղաձայններից առաջ: Ըստ այդմ տեղաշարժի ենթարկված հիշյալ 100 դեպքերը բաժանվում են

հետևյալ կերպ. ա) բառասկզբում ձայնավորից առաջ՝ 39 դեպք. հ.-ե. \*bħā- > հայ. *բա-նամ*, հ.-ե. \*dāːiħer > հայ. *տայզը* «ամուսնու եղբայր», հ.-ե. \*pedo-m > հայ. *հետ-ոյ* «հետք», հ.-ե. \*phōlo > հայ. *փոլ* և այլն, թ) ձայնավորների միջև՝ 25 դեպք. հ.-ե. \*au-dh-o > հայ. *աւո* (*աւողոյ*) «կոչիկ», հ.-ե. \*steib(h)o > հայ. *ստիանմ* «ստիանում եմ», հ.-ե. \*māːter > հայ. *մայր*, հ.-ե. \*meu-thi > հայ. *մոյր* «հենարան» և այլն, զ) բաղաձայնից հետո՝ 18 դեպք. հ.-ե. \*ambho- > հայ. *ամբ(ող)*, հ.-ե. \*k'erdi > հայ. *սիրտ*, հ.-ե. \*penkʰe > հայ. *հիմք* և այլն, դ) բաղաձայնից առաջ՝ 18 դեպք. հ.-ե. \*bhrāter > հայ. *եղբայր*, հ.-ե. \*septər հայ. *երժ*, հ.-ե. \*treħes > հայ. *երեք*, հ.-ե. \*dhṛeg'h-nā > հայ. *դառն-ամ* և այլն [Հմմտ. Ջայուն 1967, 86-97]: Եթե մի կողմ չողունենք չորրորդ՝ բաղաձայնից առաջ գտնվող դիրքը, որում առհասարակ չունենք պայքարան բաղաձայնի տեղաշարժի չենքարկվելու որևէ օրինակ՝ օրինաչափությունների մեջ, ապա մնացած երեք դեպքում, այսինքն՝ բառասկզբում ձայնավորից առաջ, ձայնավորների միջև և բաղաձայնից հետո, պայքարան բաղաձայններն ինչ-ինչ կետերում հանդես են բերում «ոչ լիարժեք» արտացոլում:

Այս առումով կարելի է նշել հետևյալը:

4.1. Բառասկզբում ձայնավորից առաջ եղող դիրքում ունենք «ոչ լիարժեք» արտացոլման 3 դեպք: Դրանք են՝ ա) հ.-ե. շրբնայնացված ետնալեզվային \*għi-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ բառարմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*bh, \*dh, \*gh բաղաձայնների, որոնք տալիս են հայ. *բ, դ, զ*. հմմտ. հ.-ե. \*bħā-nis > հայ. *բան* «խոսք, միտք», հ.-ե. \*dhāl- > հայ. *դալ-ար*, հ.-ե. \*ghřsi > հայ. *զարչ* «անախորժելի, զարշելի» և այլն [Ջայուն 1967, 86-87, այլև 1982, 46]:

բ) Հ.-ե. առաջնալեզվային շնչեղ խոլ \*th-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ արմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*ph և \*kh բաղաձայնների, որոնք տալիս են հայ. *փ, ք*. հմմտ. հ.-ե. \*phelg- > հայ. *փեղկ*, հ.-ե. \*khād-s- > հայ. *խածանեմ* «կծել» [Մույն տեղում, 89, այլև 1982, 48]:

գ) Հ.-ե. շրբնայնացված ետնալեզվային շնչեղ խոլ \*kħ-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ արմատ՝ ի տարրերություն իր շարքի հ.-ե. \*ph և \*kh հնչույթների (հմմտ. նախորդ դեպքը):

4.2. Միջայնավորային դիրքում ունենք «ոչ լիարժեք» արտացոլման մեկ դեպք, այն է՝ հ.-ե. շրբնայնացված ետնալեզվային

շնչեղ խոլ \*կ<sup>Ա</sup>հ-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ արմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*ph, \*th, \*kh բաղաձայնների, որոնք տալիս են հայ. փ, թ, խ (փխ. թ). հմնու. հ.-ե. \*dolph- > հայ. տոփեմ «խփել», այլև դոփեմ «ոտքով խփել», հ.-ե. \*meu-thi- > հայ. մոյր «հենարան», հ.-ե. \*tukh- > հայ. մուխ «մխրճվել», որից՝ ծեռնամոխ լինել [Մույն տեղում, 93, 152, այլև 1982, 49]:

4.3. Բաղաձայնից հետո եղող դիրքում ունենք «ոչ լիարժեք» արտացոլման 5 դեպք: Դրանք են՝ ա) հ.-ե. շրբնայնացված ետնալեզվային շնչեղ ձայնեղ \*գ<sup>Ա</sup>հ-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ բառարմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*bh, \*dh, \*gh բաղաձայնների, որոնք տալիս են հայ. բ, դ, գ, հմնու. հ.-ե. \*շրբh- > հայ. արբ-ի «խմեցի», հ.-ե. \*շենդհā > հայ. գինդ «ականջօղ», հ.-ե. \*srungh- > հայ. ոռնգմ [Մույն տեղում, 93-94, այլև 1982, 50]:

բ) Հ.-ե. շրբնային ձայնեղ \*բ-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ բառարմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*d, \*g բաղաձայնների, որոնք տալիս են հայ. տ, կ. հմնու. հ.-ե. \*k'erdi > հայ. սիրտ, հ.-ե. \*ang-, \*ank- > հայ. անզիս, անկիս [Մույն տեղում, 94, այլև 1982, 50]<sup>2</sup>:

գ) Հ.-ե. շրբնայնացված ետնալեզվային ձայնեղ \*գԱ-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ բառարմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*d և \*g բաղաձայնների, որոնք ինչպես տեսանք, տալիս են տ և կ (տե՛ս նախորդ դեպքը):

դ) Հ.-ե. սովորական ետնալեզվային շնչեղ խոլ \*kh-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ բառարմատ՝ ի տարրերություն հ.-ե. \*ph և \*th բաղաձայնների, որոնք տալիս են հայ. փ, թ. հմնու. հ.-ե. \*phamph- > հայ. փամփուշտ, հ.-ե. \*por-thu- > հայ. որբ «հորբ» [Մույն տեղում, 94, այլև 1982, 50]:

ե) Հ.-ե. շրբնայնացված ետնալեզվային շնչեղ խոլ \*կ<sup>Ա</sup>հ-ի դիմաց հայերենում չունենք որևէ հնչույթ նշող բառ կամ բառարմատ՝ ի տարրերություն հ.-ե. իր շարքի \*ph-ի և \*th-ի, որոնք տալիս են հայ. փ, թ (տե՛ս նախորդ դեպքը):

Ըստ այսմ ստացվում է «ոչ լիարժեք» արտացոլման 9 դեպք կամ այսպես կոչված կանոն («օրենք»), որոնց համաձայն հայերենում չի

<sup>2</sup> Հ.-ե. \*b-ի թույլ հնչույթ լինելու և ըստ այդմ նաև հայերենում «ոչ լիարժեք» արտացոլում ունենալու առումով տե՛ս Pedersen 1951, Hamp 1954, 40, Գամկրելիձե, Իվանով 1984, 6-7, և որ այն մերժվում է առհասարակ. տե՛ս Ջայուքյան 1982, 59-67:

հիմնավորվում պայքական բաղաձայնի տեղաշարժը՝ առնված օրինաչափությունների մեջ։ Եթե հաշվի ենք առնում այդ դեպքերը, ապա պարզվում է, որ հ.-ե. շրբնայնացված և սովորական ետնալեզգային բաղաձայնների մի զգալի մասը (\**gʰ*, \**gʰh*, \**kʰ*, \**kʰh*), առաջնալեզգային և շրբնային բաղաձայններից մեկական բաղաձայն (\**th* և \**b*) չեն արտացոլվում հայերենի պայքական բաղաձայնների տեղաշարժի մեջ՝ առաջ բերելով հ.-ե. պայքական բաղաձայնների արտացոլման ոչ լիարժեքություն։ Ի՞նչն է պատճառը, և դրանց հետագա ուսումնասիրությունն ինչպիսի՝ արդյունքի կարող է հանգեցնել։ Այս հարցերի պատասխանը մնում է հայերենի համեմատական ուսումնասիրության հետագա խնդիրներից մեկը։

5. Մնացած դիրքերում հայերենի պայքական բաղաձայնների տեղաշարժը ներկայացնում է օրինաչափությունների հետևյալ քանակային պատկերը։

5.1. Բառասկզբում ձայնավորից առաջ՝ ա) հ.-ե. շնչեղ ձայնեղ \**bh*, \**dh*, \**gh* բաղաձայնները տալիս են հայ. *p*, *η*, *q* 10 բառում կամ բառարմատում. *հմնտ.* հ.-ե. \**bherō* > հայ. *բերեմ* «բերում եմ», հ.-ե. \**dhe-*no- > հայ. *դ(h)նեմ* «դնում եմ», հ.-ե. \**ghomo-* > հայ. *զոմ* «անասնատեղի» և այլն, բ) հ.-ե. ձայնեղ \**b*, \**d*, \**g*, \**gʰ* բաղաձայնները՝ *պ*, *տ*, *կ* 7 բառում կամ բառարմատում. *հմնտ.* հ.-ե. \**bełō* > հայ. *պեղեմ* «պեղում եմ», հ.-ե. \**də-*je-mi > հայ. *տամ* «տալիս եմ», հ.-ե. \**gur-no-s* > հայ. *կուրմ* «քիլոնը», հ.-ե. \**gʰou-* > հայ. *կով* և այլն, գ) հ.-ե. խոլ \**p*, \**t*, \**k*, \**kʰ* բաղաձայնները՝ հայ. *հ* (կամ *յ*), *p*, *p* 12 բառում կամ բառարմատում. *հմնտ.* հ.-ե. \**pel-nu-mi* > հայ. *հեղում* «լցնում եմ», հ.-ե. \**pol-* > հայ. *յոլ-ով* «շատ, լիքը», հ.-ե. \**pod-* > հայ. *ոտ-մ* «ոտք», հ.-ե. \**tā-n* > հայ. *քան-ամ* «խոնավանալ», հ.-ե. \**kṛ-* > հայ. *քամ-ել*, հ.-ե. \**kʰa-m* > հայ. *քան-ի* և այլն, իսկ *η*) հ.-ե. շնչեղ խոլ \**ph* և \**kh* բաղաձայնները՝ հայ. *փ*. իւ 10 բառում կամ բառարմատում. *հմնտ.* հ.-ե. \**phelg-* > հայ. *փեղկ*, հ.-ե. \**khai-t-* > հայ. *խայթ-եմ* և այլն։

5.2. Զայնավորների միջև՝ ա) հ.-ե. շնչեղ ձայնեղ \**bh*, \**dh*, \**gh*, \**gʰh* բաղաձայնները տալիս են հայ. *ւ*, *դ*, *զ* 7 բառում կամ բառարմատում. *հմնտ.* հ.-ե. \**bhsə-**bh-* > հայ. *սազ*, հ.-ե. \**au-dh-o-* > հայ. *սադ* «օդ», հ.-ե. \**meighā* > հայ. *մէգ «մշուշ»*, հ.-ե. \**g'hagʰh-* > հայ. *ձագ* և այլն, բ) հ.-ե. ձայնեղ \**b*, \**d*, \**g*, \**gʰ* բաղաձայնները՝ հայ. *պ*, *տ*, *կ* 5 բառում կամ բառարմատում. *հմնտ.* հ.-ե. \**steibo-* > հայ. *ստիպեմ*

«ստիպում եմ», h.-ե. \*pedo- > հայ. *գետ*, h.-ե. *bheg-* > հայ. *բեկանեմ* «կուրում եմ», h.-ե. \*reg<sup>h</sup>os- > հայ. *երեկոյ* և այլն, զ) h.-ե. խոլ \*p, \*t, \*k, \*k<sup>h</sup> բաղաձայները՝ հայ. լ, թ (կամ յ), թ 8 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*prep- > հայ. *երևիս* «երևում եմ» h.-ե. \*auti-> հայ. *աւր* «օրեւան» h.-ե. \*mātēr > հայ. *մայր*, h.-ե. \*tek- > հայ. *թեքեմ* «թեքում եմ», h.-ե. \*lik<sup>h</sup>- > հայ. *լիքանեմ* «լիքում եմ» և այլն, իսկ դ) h.-ե. շնչեղ խոլ \*ph, \*th, \*kh բաղաձայները՝ հայ. փ, թ, ք 5 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*eph- > հայ. *եփեմ* «եփում եմ», h.-ե. \*meu-thi > հայ. *մոյր* «հենարան», h.-ե. \*mukho- > հայ. *մոխ* «ծովիս» և այլն:

5.3. Բաղաձայնից (ձայնորդ կամ պայքական) հետո՝ ա) h.-ե. շնչեղ ձայնեղ \*bh, \*dh, \*gh բաղաձայները տալիս են հայ. թ, դ, զ 4 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*sr<sup>h</sup>bh- > հայ. *արքեմ* «խմում եմ», h.-ե. \*yendhā > հայ. *զինդ* «ականջօղ», h.-ե. \*srungh- > հայ. *ոռնզմ* և այլն, թ) h.-ե. ձայնեղ \*d, \*g բաղաձայները՝ հայ. տ, կ 2 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*k'erdi- > հայ. *սիրտ*, h.-ե. \*ang-, այլէ \*ank- > հայ. *անկիմ*, այլէ *անզիմ*, զ) h.-ե. խոլ \*p, \*t, \*k, \*k<sup>h</sup> բաղաձայները՝ հայ. թ, դ, զ 5 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*k<sup>h</sup>tri- > հայ. *քարր* «օձ», h.-ե. \*ar-t- > հայ. *արդ* «այժմ», h.-ե. \*snerek- > հայ. *ներգել* «քույլ, նվազ», h.-ե. \*penk<sup>h</sup>e > հայ. *իհնզ*, դ) h.-ե. շնչեղ խոլ \*ph, \*th բաղաձայները՝ հայ. փ, թ 2 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*phamph- > հայ. *փամփուշտ* «միզանոր», h.-ե. \*por-thu- > հայ. *որբ* «հորբ», իսկ ե) h.-ե. \*bt, \*kt, \*pt հնչյունակապակցություններում \*t-ն՝ հայ. թ 5 բառում կամ բառարմատում. *հմմտ.* h.-ե. \*g<sup>h</sup>b-ti- > հայ. *կարբ* «կերիկ, (հավի) չանց», h.-ե. \*galakt > հայ. *կար*, բրոն. *կաղց*, h.-ե. \*pter-i-ski-> հայ. *Ք(h)n-չիմ* «քոչում եմ» և այլն [Խեն Ջայուքյան 1967, 86-95]:

6. Հետագա, հատկապես 60-ական թթ. հետո երևան եկած ստուգաբանական փորձերն ինչոր չափով լրացումներ ու ճշգրտումներ են մտցնում այս քանակային պատկերի մեջ: Նշենք դրանցից մի քանիսը:

ա) Հայ. (բրբn.) *դալլ* (նաև դալ) «կարնախեմ» բառը Հ.Աճառյանը, հենվելով Հ.Հյուրշմանի տվյալների վրա [Hübschmann 1883, 437], կապում էր դիել «կլրծքով կերակրել» բառի հետ և բխեցնում h.-ե. \*dhāl- (այլէ \*d̥hēi, \*d̥hē, \*d̥hēi, \*d̥hi) ձևից [Աճառյան 1, 1971, 611-612, 668], թեև Յ.Պոկոռնու բառարանում հայ. *դալլ* բառի համար առանձնացվում էր. \*dəili- ձևը [Pokorný 1959, 829-831]: Գ.Զահոռյանը տալիս է h.-ե. \*d̥hē(i)-արմատը, որի h.-ե. \*d̥hēie-

տարբերակից է բխեցնում հայ. *դիեմ* ձևը, իսկ հ.-ե. \*dհեi-լi-արմատից՝ հայ. *դալլ* (*դալ*)-ը [Դյասպառ 1967, 247, այլև Զահուլյան 1987, 119, 221]: Ըստ այսմ հայ. դ-ն համապատասխանում է հ.-ե. \*dհ-ին, ոչ թե \*d-ին, եթե առհասարակ ավելի հավանական շիամարենք հ.-ե. այդ ձևի փոխարեն *\*dhal-* ձևը, որից է ծագում նաև հայ. *դալ-ար* «մատղաշ» բառը:

բ) Հայ. *զիհի* (<զիյի կամ զի>) «մի տեսակ ծառ» բառը Հ.Աճառյանը բխեցնում է հ.-ե. \*wītā ձևից [Աճառյան 4, 1979, 627] և միաժամանակ գտնում է, որ վրաց. γνία, թուշ. γνιέ «զիհի» ձևերը փոխառություն են հայերենից, ի հաստատումն որի տալիս է հայ. *զիհի* - վրաց. γνίνi, γνίνo «զինի» և այլն անցումը. հայ զ ~ վրաց. γν (փխ. հայ. \*զi կամ \*զni ~ վրաց. γν) փոփոխությամբ [հմնտ. Աճառյան 1, 1971, 554, 558-559]: Գ.Զահուլյանը շունի հայ. *զիհի* սոուզաբանությունը, թեև հայ. զինի ~ վրաց. γνինո անցման համար նշում է հ.-ե. \*g<sup>Վ</sup>hinio- ձևը վերջինս առնելով հարցական նշանի տակ [Դյասպառ 1967, 53]: Հ.-ե. \*g<sup>Վ</sup>h > հայ. շրբնայացած զ (կամ \*զi < \*զni)-վրաց. γν փոխանցման մեկ այլ օրինակ է հանդիսանում հայ. *վիրապ* «խոր փոս, խորխորատ» բառը, որը ծագում է հ.-ե. \*g<sup>Վ</sup>hirap- ենթադրելի (հարցական) ձևից, և ըստ այդմ հայ. *վիրապ*-վրաց. γνirabi «անցք, փոս» [նոյն տեղում, 53]: Կարելի է մտածել, որ վրացերենն այդ բառերը փոխ է առել ավելի շուտ, քան որ դրանք հայերենում դարձել են *զիհի* (<\*զիհի<\*զուիհի>) և *վիրապ* (<\*զիրապ <\*զուիրապ>) [տե՛ս Համբարձումյան 1996, 31]:

## Հ.-Ե. ԾԱԳՍԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց լեզվի պատմության հարցերը շարունակում են մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս բնագավառում կան ակնառու ձեռքբերումներ, որոնք հիմք են համայսանում հետազա ուսումնասիրությունների համար: Այդուհանդերձ կարելի է առանձնացնել որոշակի հարցեր, որոնք այսօր ոչ ամբողջովին են պարզաբանված ու մեկնաբանված: Վերջիններս հիմնականում առնչվում են հայերենի պատմական հնչյունաբանության, բառագիտության և շարահյուսության հետ: Մասնավորապես զգալի թիվ են կազմում հ.-ե. ծագման այն բառերը, որոնք մինչև այժմ, կապված համեմատաբանության մինչև օրս գործող հնարավորությունների հետ, կամ ամենևին ստուգաբանված չեն, կամ դեռևս մնում են ոչ հավաստիորեն ստուգաբանված:

Այդ կարգի բառերի նոր ստուգաբանությունները, ինչպես նաև դրանց հիման վրա հնչյունական նոր անցումների («օրենքների») սահմանումը, այնուհետև իմաստային համապատասխանությունների հաստատումը ինչ-որ չափով կարող են նոր դեր ունենալ հայերենի պատմության դեռևս չլուծված հարցերի ուսումնասիրման և գնահատման գործում:

2. Հայերենում կան զգալի թվով բառեր, որոնց մի մասը, անկախ նախկինում երևան եկած ստուգաբանական փորձերից, այսօր ենթադրում է հ.-ե. ծագում: Վերջինս հիմնավորվում է նորագոյն ստուգաբանությունների տվյալներով, այլև հաստատվում ցեղակից լեզուների հետ հայերենի ունեցած համապատասխանությունների հիման վրա:

Հ.-Ե. ծագման հայերեն բառերի ստուգաբանությունը տալիս ենք ոչ թե պայմանական դասակարգումով (օրինակ՝ այրբենական հերթականությամբ), այլ ըստ բառերի իմաստային (թեմատիկ) խմբերի մեջ ընդգրկմամբ՝ ելնելով Գ. Զահուկյանի կողմից առանձնացվող 23 իմաստային (թեմատիկ) խմբերում այս կամ այն ստուգաբանելի բառի գրաված տեղից [Զահուկյան 1987, 46-58, 204-222, Խմբություն 1949, Benveniste 1969 և այլն]:

Ըստ այդմ, ստորև ներկայացվող հ.-ե. ծագման հայերեն բառերը համալրում են առնվազն 5 բառինաստային (թեմատիկ) խմբի մեջ

մտնող բառերի քանակը, ընդ որում ոչ միայն ուղղակիորեն, այլև ինչ-ինչ ճշգրտումներով՝ կապված հայոց լեզվի զարգացման ընթացքում այդ բառերի իմաստային փոփոխությունների հետ:

Այսպես, *աղջիկ* բառը, ըստ մեզ հասած հայերեն գրավոր հուշարձանների տվյալների, նշանակում է այնպիսի հասկացություն, որով մտնում է «մարդկություն» սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն» իմաստային (քենատիկ) խմբի մեջ [Զահոռկյան 1987, 207-208]: Նոր տվյալները ցույց են տալիս, որ բառը ամենանախնական իմաստով նշանակում է «երկանքով աղացող կին», այլ կերպ ասած՝ «քնատնտեսությանը վերաբերող զրադարձ ունեցող կզական սեռի անձ»: Այդ նշանակությունն ավելի հին է, քան այն, որ մեզ է հասել գրավոր հուշարձանների միջոցներ: Ուստի *աղջիկ* բառը մտնում է մեկ այլ՝ «ուտելիք և ըմպելիք» կերակրի պատրաստում և ամանեղեն» իմաստային (քենատիկ) խմբի մեջ: Վերջինիս բավականին մոտ է «ֆիզիկական տարրեր գործողություններ և սրանց հարաբերությունը առանձին արվեստների ու արհեստների հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով ու արտադրանքներով» խումբը [նոյն տեղում, 213-214], որի մեջ մտնում է նաև հայ. (բրբ.՝), *սոնել* «խոչոր աղալ» բառը:

Հայ. *սայլ*, (բրբ.) *գ’ալգ’ալի* («երկանիկ սայլ») բառերը, որոնք ունեն հ.-ե. ծագում, մտնում են «երկագործություն, բուսականություն» բառինաստային (քենատիկ) խմբի մեջ: *Սայլ*-ը հետագայում է դարձել այլ հասկացությունների անվանում: Այդ խմբի միավոր են նաև հայ. *կամմ* «կալսիչ, ծեծիչ» և *աշան* «կալսելիք. կալսելը, կալսում» բառերը:

Հայ. *արտախոյր*, *խաւարտ*, *տից* (*տիք*) և *խաւարծի* բառերը, որոնք նախաքրիստոնեական մտածողությամբ, փոխարերացված խոսքում գործածված միավորներ են, իրենց կրնկրեալ իմաստներով պատկանում են տարրեր իմաստային (քենատիկ) խմբերի, սակայն «վիպասանական» առումով «զգացմունք (ֆիզիկական որոշ դրսերումներով)». Խառնվածքային, բարոյական և գեղագիտական բմբոնումներ» խմբի մեջ են մտնում, այլ կերպ ասած՝ լայն իմաստով մշակութային բառեր են:

Հ.-ե. ծագման հայերեն բառերից է *բանձր-ը*, որն այստեղ ընթացքան է առնվում արմատի հնչյունական կազմի ծագումնային ճշգրտման նպատակով, բնականաբար մնում է «տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև» իմաստային (քենատիկ) խմբի մեջ [նոյն տեղում, 215-216]:

3. Հիշյալ բառերի նոր ստուգաբանությունը կամ ստուգաբանական ճշգրտումը հիմնված է հ.-ե. լեզուների համեմատական ուսումնասիրության տվյալների վրա, այսինքն՝ փորձել ենք մի կողմից պահպանել մեզանում գոյություն ունեցող ավանդական մոտեցումը, մյուս կողմից՝ ոչ անկողմնակալ ձևով մոտենալ շրջանառության մեջ դրված նոր տվյալներին: Հայոց լեզվի բառապաշտիքի հնագույն շերտերը բառաքննության և ստուգաբանության առարկա կարող են լինել միայն մեզանում գոյություն ունեցող ձեռքբերումների, ինչպես նաև նորագույն տվյալների մանրակրկիտ Վերլուծության և ըստ ամենայնի չափորոշման պայմաններում:

Ստորև անդրադառնում ենք վերը նշված բառիմաստային (քեմատիկ) խմբերի մեջ հաստատված գործությունների, ինչպես նաև նորագույն տվյալների մանրակրկիտ Վերլուծության և ըստ ամենայնի չափորոշման պայմաններում:

### Հայ. *աղջիկ* < h.-ե. \*al-

1. Հայերենի բառապաշտիքի «մարդկություն. սեռ, տարիք, լնտանեկան հարաբերություն» բառիմաստային (քեմատիկ) խմբի մեջ է մտնում նաև *աղջիկ* բառը, որն ինչպես հայտնի է, ունի հ.-ե. ծագում [Զահորկյան 1987, 145, 207 և այլն]: Այստեղ մեր ուշադրության առարկան է այն, թե բառը հ.-ե. ինչ արմատից է ծագում [Խմնության 1997, 149-152]:

2. Հայերենում *աղջիկ* բառը գործածվում է 5-րդ դ. գրավոր հուշարձաններում: Այն կազմված է *աղիջ* բառից -իկ փոքրացուցիչ-փաղաքական ածանցով: *Աղիջ* բառը ևս կիրառվում է վաղ շրջանից: Բառն ունեցել է մի քանի իմաստ. ա) «օրիորդ, կույս», բ) «դեռատի կին», գ) «նաժիշտ» և ավելի ուշ նաև դ) «դրսատր, ոչ արու զավակ» [Աճառյան 1, 1971, 129]: *Աղջիկ* բառի նախնական ձևն է եղել *աղիծ-ը*, այսինքն՝ կիսաշփական ձայնեղ ջ-ն փոխարինել է իր խոլ ճ-ին, հավանաբար դ-ի ազդեցությամբ [նույն տեղում]:

Ենթադրվում է, որ -իկ ածանցով մի քանի բառեր, այդ թվում նաև *աղջիկ* բառը, նախահայերենում ունեցել են -իկմ (< h.-ե. \*-i-kon) հիմքի տարր, որովհետև հետազայում՝ գրաբարում, նաման բառերը ենթարկվում են ներքին թերման (օրինակ՝ ծաղիկ-ծաղկամ, մանուկ-մանկան, աղջիկ-աղջկան և այլն), այսինքն՝ գրաբարում այդ նաև աջանորդն ընկել է [Meillet 1936, 80, Զահորկյան 1987, 238, 356, 368]:

Գրաբարում *աղիջ* բառը հանդես է գալիս ընդհանուր՝ «աղջիկ, օրիորդ, կույս» իմաստով [Տիմորենս Կուլ 1908, 238, «Կնիք

հաւատոյ» 1914, 168 և այլն]: Իսկ հետագայում բառն ունեցել է նաև այլ՝ «անառակ, աճքարո» իմաստը [Եւսեբեոս Կեսարացի 1818, 204 և այլն]: Ինչպես կտեսնենք ստորև, հիշյալ բոլոր իմաստները հետագա ձեռքբերում են:

3. Հ.Աճառյանն աղիջ (<աղիծ) բառը դիտում է իրեն «անստոյգ բառ», իսկ մեկ այլ աշխատության մեջ՝ «փալդերենից» (ուրարտերենից) հայերենին անցած փոխառություն [Աճառյան 1, 1979, 129, 1940, 186]: Գ.Զահորկյանն իր վաղ շրջանի աշխատություններում տալիս է աղիջ (<աղիծ) բառի ստուգաբանությունը [Ջայակյան 1967, 121, 1982, 422]: Սակայն դրանցից առաջինում, կապված աղիս և աղախիճ բառերի հետ, նշում է հետևյալը. «Մեյեն աղախիճ-ը աղիջ «աղջիկ» բառի հետ միասին հանգեցնում է հ.-ե. \*al-ին «աղալ, մանրել, փշրել» [Ջայակյան 1967, 121]: Այս կարևոր նկատառումն ավելի ուշ անտեսվում է: Գ.Զահորկյանն հետագայում մի կողմից՝ տալիս է աղիջ բառի նոր ստուգաբանություն՝ այն բխեցնելով հ.-ե. \*թօ-լի- ձևից [Զահորկյան 1987, 145], իսկ մյուս կողմից՝ Հ.Աճառյանի հետևյալամբ աղջիկ բառը բերում է ուրարտերենից հայերենի կատարած փոխառությունների շարքում՝ իրեն նշտանեկան հարաբերություններ նշանակող բառերից մեկը [Զահորկյան 1987, 436]:

4. Վերջին ժամանակներս կարծիք է հայտնվում այն մասին, որ հ.-ե. բարբառների մի մասում «կին» գաղափարն առնչվում է «աղալ, հատիկը մանրել» նշանակության հետ (հ.-ե. \*mel- «փշրել, աղալ, մանրել») և \*մլ կամ \*mul «հատիկմանրիչ, աղաց». հմտ. լատ. mulier «կին» և այլն), իսկ հայ. աղջիկ «դեռատի կին» բառն առնչակից է դիտվում հայ. աղալ և աղարի «աղաց, ալրաղաց» բառերին [Гамкрелиძե, Иванов 1984, 692-693]: Այս նոր տեսակետի հեղինակները միաժամանակ գտնում են, որ հատիկն աղալու գործը բնատնտեսության հետ կապված երևոյթ է, որով զբաղվում էր տանտիրութին՝ կինը. այդ առումով նշանակալից փաստ է խեթ. SAL NA 4 ARA գաղափարագիրը, որ նշանակում էր «աղացուի», բառացի՝ «կին-աղաց» [նոյն տեղում]: Հեղինակները գտնում են նաև, որ «աղաց, հատիկաղաց» երևոյթն, ըստ հնագիտական տվյալների, հասնում է մինչև մ.թ.ա. 5-րդ հազարամյակը (նկատի է առնվում Իրանի հյուսիսային տարածքը, նաև արտացոլումը Եգիպտոսի նյութական մշակույթի մեջ), ընդ որում այն Եվրոպա է բափանցում Սերծավոր Արևելքից [նոյն տեղում, 693-694]: Կարծիք է հայտնվում նաև այն մասին, որ հ.-ե. բարբառների մի խմբում գործածվող \*mel-

«մանրել, փշրել, աղալ» բառ-արմատի դիմաց բարբառների մեկ այլ խմբում, իքրև նորագոյացություն, հանդես է զալիս մեկ ուրիշը, այն է՝ \*al-, որին էլ առնչվում է հայ. *աղալ, աղաւրի* բառերի աղ- արմատը (հմնտ. հուն. ձլέω «աղում եմ», ավեստ. աša-, այլև \*arta- «աղացած», պարսկ ձր «ալյուր», հինդ. և բենգալ. ձտ «ալյուր» և այլն) [Հույն տեղում, 693]:

5. Ինչպես նկատում ենք, հայ. *աղօիկ* (<աղիջ-իկ>) և *աղալ, աղաւրի* բառերը ծագումով մերձավոր են և կապվում են հ.-ե. բնատնտեսության մի որոշակի երևույթի հետ: Սակայն այդ բառերում առկա հնագույն (նախագրային կամ վաղնջական) արմատը, որն է *աղ* (<\*al-), չի կապվում հ.-ե. \*mel- արմատին, ուստի այն բոլորովին ուրիշ է: Թ.Գ.ամկրելիձեն և Վ.Իվանովն այդպիսի արմատ չեն առանձնացնում: Իսկ դա չի նշանակում, որ հայ. *աղալ, աղաւրի* բառերը ծագումը հայտնի չէ: Ընդհակառակն, հայտնի է, որ այդ բառերը ծագում են հ.-ե. \*al- արմատից [Աճառյան 1, 1971, 118]: Գ.Զահորկյանը *աղալ-ը* բխեցնում է հ.-ե. \*alā- արմատից, իսկ *աղաւրի-ք* բառը՝ հ.-ե. \*alētrījo- ձևից՝ երկուսի համար ընդհանուր արմատ դիտելով հ.-ե. \*al-, այսինքն՝ այն, ինչ տալիս են Հ.Հյուրշմանը և Հ.Աճառյանը [Hübschmann 1895-1897, 414, Աճառյան 1, 1971, 118]:

6. Հայ. *աղալ* բառին և նրանից կազմված ձևերին հատուկ ուշադրություն է դարձրել Ա.Մելյեն, երբ որոշակի կապ է տեսել հայ. *աղալ* և հուն ձլեաւ բառերի միջև [Meillet 1924, 4-6, Մելյե 1978, 227-228]: Նշենք, որ այդ առնչությունը նկատվել է ավելի վաղ, անցյալ դարի կեսերին. նկատի ունենք Գ.Այվազովսկու մի հոդվածը, որում մատնացույց է արվում հայ. *աղալ* և հուն. ձլեաւ «աղալ» զուգադիպումը [Այվազովսկի, 1852, 15]: Հետագայում ուրիշ հեղինակներ ևս անդրադարձել են այդ առնչությանը [Աճառյան 1, 1971, 118]: Սակայն Ա.Մելյեն հարցի քննությունը տալիս է իր ամբողջության մեջ՝ կապված հ.-ե. երևույթի տարածվածության (բարբառային տարբերակվածության) հետ: Նա գտնում է, որ հ.-ե. բարբառների հյուսիսարևելյան խումբը (բալքական, սլավոնական, գերմանական, կելտական, իտալյան, ալբանական) «աղալ, աղաց» իմաստի համար գործածելիս են եղել \*mel- արմատը, իսկ արևելյան խումբը (հնդկական, իրանական, հունական, հայկական)՝ \*al- արմատը: Ըստ այդմ հ.-ե. լեզուների բարբառային տարբերակման մի կարևոր, անշրջանցելի հատկանիշն էլ հանդիսանում է «աղալ, աղաց» իմաստի համար երկու \*mel- և \*al- արմատների գոյությունը: Վերջին ժամանակներս փորձ է արվել հայ. *աղամ* և հուն. ձլեաւ

բառերը բխեցնել հ.-ե. \*h<sub>2</sub>elh1-, իսկ հայ. մալեմ բառը՝ հ.-ե. \*m(ս)elh<sub>2</sub>- ձևերից [Խմնտ. Barton 1996, 21-27]:

7. Ա.Մեյեի կողմից անցկացվող նման տարրերակումը վերաբերում է հ.-ե. \*al- արմատին, այնինչ հայերենն ունի հ.-ե. ծագման բառեր, որոնք առնչվում են մյուս՝ հ.-ե. \*mel- արմատին: Այսպես, հայ. մալ- «մանրել, փշրել» արմատը ծագում է հ.-ե. \*mel- արմատից և հայերենում հանդես է գալիս բազմաթիվ ձևերով (մալել «մանրել, մաշել, ջարդել», այլև «կոտել, ամորձատել»), մոլ- արմատը, որից՝ մլաղաց «ջրաղացան», մլմել «շփել, քերել», մամոլ «տպագրական ճնշիչ գործիք», մեղ- արմատը, որից՝ մեղ-կ, մեղ-մ բառերը և այլն [Աճառյան 2, 1977, 255]: Ավելացնենք, որ հայ. բարբառներում ևս կան զգայի թվով բառեր, որոնք ծագումով կապվում են այդ արմատին: Իսկ այս հատկանիշով հայերենը նշնում է Ա.Մեյեի առանձնացրած հյուսիսարևելյան խմբի մեջ:

8. Ի մի բերելով պատմամշակութային և լեզվական փաստերը՝ նկատում ենք, որ հայ. աղջիկ բառը, որի նախնականն է աղիջ (<աղիծ) ձևը, հանգում է հ.-ե. \*al- արմատին: Ըստ այդմ, հայ. աղջիկ (<աղիջ<աղիծ) բառի աղ- (<\*ալ-) արմատն ամենանախնական իմաստով նշանակել է «երկանքով աղացող, աշխատող տնտեսուիչ»: Հետազոյւմ այդ իմաստը կոնկրետացել է, այսինքն՝ «քնատնտեսությանը վերաբերող զբաղմունք ունեցող իգական սեռի անձ» նշանակությունից առանձնացել են «կին, ոչ արու զավակ», այնուհետև՝ «օրիորդ, կույս», իսկ ավելի ուշ՝ «անառակ, անքարո կին» իմաստները: Իմաստային նման առանձնացումը եղել է լեզվի տևական զարգացման հետևանքով: Ակսած առնվազն 5-րդ դ.՝ հայ. աղջիկ (<աղիջ<աղիծ) բառն արդեն նոր իմաստներով, նոր նշանակությամբ է գործածվում: Վերջինս ամրագրվում է հայերենի զրակոր ավանդույթով և նույնանում է արդի հայերենի բոլոր տարրերակներում հանդես եկող իմաստի հետ:

9. Հայ. աղջիկ (<աղիջ<աղիծ) բառի այս նոր մեկնաբանությունը կարելի է սպառիչ համարել, եթե հավաստիորեն պարզաբանվի նաև բառի մյուս մասը՝ -իջ (<-իծ) բաղադրիչը:

Հայերենում ունենք բառեր, որոնցում կա այդ -իծ մասնիկը, օրինակ՝ աղաւնիծ «մի տեսակ խոտ», արտիծ «արտում բուսնող մի տեսակ խոտ, մոլախոտ», լորիծ «լոր միջատը», կապիծ «1. հատով հաշվելի ապրանքի մի չափ, 2. սրունքները պատող զրահ», կափիծ «չոր կափ», կոպիծ «խիճ, քարի կտորտանք», հատիծ «կուտ», պատաղիծ «բաղեղ», պատիծ «1. կեղև, կճեպ, 2. սոնապան,

### 3. կնճիք», բատիճ «ցեց» և այլն:

Այսուհետև, հայերենում այս -իծ մասնիկն ունեցող բառերը պատմականորեն և բառակազմորեն բաժանվում են մի քանի խմբի. ա) բառեր, որոնք առ այսօր մնում են չսոուգարանված, թեև դրանցում առանձնացվում է -իծ ածանցը (օրինակ՝ *աղաւնիծ*, *արտիծ*, *կափիծ*, *կոպիծ*, *հատիծ*, *պատաղիծ*, *պատիծ*), բ) բառեր, որոնք ունեն հ.-ե. ծագում (օրինակ՝ *լոիծ*<հ.-ե. \*plusos, *ուտիծ*<հ.-ե. \*ōd-), զ) բառ, որն իրանական փոխառություն է. *կապիծ* <պակլ. կարէ և այլն [հմտ. Jahukian 1993, 257-269]: Բերված բառերից հ.-ե. ծագում ունեցողները չունեն -իծ մասնիկն արտացոլող տարր, իսկ իրանական փոխառություն համարվող *կապիծ*-ն ունի այդ տարրը: Սրանից թերևս հնարավոր է ենթադրել, որ -իծ մասնիկը հետագա գոյացություն է և հայերենին է անցել իրանական լեզուներին բնորոշ մասնիկի բառակազմական ընդհանրացման ճանապարհով: Նման վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ չսոուգարանված բառերի մեջ (հմտ. *կալ-իծ*, *հատ-իծ*, *պատ-իծ* և այլն) պարզ արմատ են *կալ*, *հատ*, *պատ* և այլն բաղադրիչները:

10. Եթե իշշալ բառերում, բացի *կապիծ* բառից, -իծ մասնիկը իրանական ազդեցության արդյունք չէ (համարանության օրենքով, որ ածանցման դեպքում բավական դժվար է), ապա թերևս կարելի լինի իբրև վարկած առաջ քաշել այն գաղափարը, համաձայն որի հայերենում ևս նախագրային կամ վաղնջական շրջանում գործածվելիս է եղել իրանական -իծ բաղադրիչին ծագումով մոտ (հ.-ե. շրջանից եկող) մի ածանց: Վերջինս կարող էր լինել ոչ միայն *աղիծ* (<*աղիծ*) բառում, այլև թերևս *կոպիծ*<*կոպ-իծ* (հմտ. *կոպար* «սահման», այսինքն «կիսված, բաժանված») և նման բառերում՝ իբրև նախանական կազմության բաղադրիչ և ոչ թե հետագա ածանցական հավելում:

11. Այսպիսով, կարելի է կարծել, որ հայ. *աղջիկ* (<*աղիծ*<*աղիծ*) բառն ունի հ.-ե. ծագում, սակայն բխում է հ.-ե. \*al- արմատից՝ իբրև «քնատնտեսությամբ զբաղվող անձ, ընտանիքի մի տնտեսուհի» հասկացության անվանում: Նախկինում չսոուգարանված, վերջին ժամանակներս հ.-ե. \*թօ-լի- ձևից բխեցվող հայ. *աղիծ* (<*աղիծ*) բառի համար ավելի հավանական և հիմնավոր է հ.-ե. \*al-ից բխեցնելը, եթև բառի ստուգարանությանը մոտենում ենք թե՝ լեզվական և թե՝ պատմական-մշակութային տեսակետից: Ըստ այսմ ոչ թե համարվում, այլ ճշգրտվում է հայերենի բառապաշարի վերը նշված բարիմաստային (թեմատիկ) խումբը:

## Հայ. սայլ <հ.-ե. \*k<sup>[h]</sup> el-

1. Հայ. սայլ («հին անվավոր փոխադրամիջոց») բառը գրավոր հուշարձաններում գործածվում է երկու՝ բուն և փոխարերական իմաստով. ա) «Եզան կոշտ կառք» (Ս.Գիրք, ծնն. ԽԵ, 19, 21 և այլն), թ) «Մեծ և Փոքր արջի համաստեղություն» (Յոր, Թ, 9, Շիր. 48, 49 և այլն), «Հյուսիս կամ հյուսիսային քենո» (Փիլ. Ել. 533, Խմ. 75 և այլն), «առանցք, լիսեռ» (Արիստ. Աշխ., Նյու. Կազմ. Բ և այլն), «երաժշտական մի ձայն» (Մանրու., «Արարատ», 259) [տե՛ս «Նոր բառզիրք հայկացյան լեզվի» 2, 692, Աճառյան 4, 1979, 169, Մալխասյան 4, 1945, 180]:

2. Սայլ բառի սոուզաբանության լորջ փորձը պատկանում է Է.Լիդենին [«Հանդէս ամսօրեայ», 1905, 192], ըստ որի բառը փոխառություն է փոռութ. \*satilia ձևից: Սա լենդունում են հետագա հեղինակները [Boisacq 1923, 854, Pokorny 1, 1959, 339, Աճառյան 4, 1979, 169]: Այդ ձևից են փոխառյալ դիտվում նաև հուն. σάτιλλα «ξπιյը աստղերի, Մեծ արջի համաստեղություն» (Հեսիր.), σατίνη (Հոմեր.), հոգն. σαտίνա (Անակր.) «սայլ, ուզմակառք» ձևերը, այսինքն՝ հուն. բառն ունի փորբասիական ծագում: Այնուհետև, ըստ Գ.Զահուկյանի, սայլ բառը կամ հայ.-փոյուզ. ժառանգություն է հ.-ե. \*k'-at- «կրվել, պայքարել» արմատից, կամ փոխառություն հարեան ժողովուրդների լեզուներից:

Սուածին դեպքում բառը քննվում է փոյուզ. κατ- «պայքար» (<հ.-ե. \*k'-at- «պայքարել») - հայ. սայլ առնչության մեջ՝ նշելով հետևյալ նկատառումները: 1) «Հայ. բառի ծագումը այս արմատից կասկածելի է. այն հենվում է հայերենի հետ համեմատվող և փոյուզ. համարվող սատիլլա «համաստեղություն», սատինη «կառք» բառերի համար ենթադրվող «մարտակառք» նախնական իմաստի վրա, մինչդեռ այդ բառերի փոյուզական ծագումը հավաստի չէ, թ) «մարտակառք» նախնական իմաստ ունենալը կասկածելի է, զ) հայ. բառը ամենայն հավանականությամբ փոխառություն է փորբասիական մի լեզվից, որին պատկանում են հիշյալ բառերը [Զահուկյան 1970, 21], 2) «սայլ» (ունի «Մեծ արջի և Փոքր արջի համաստեղություններ» իմաստը՝ տրված նմանությամբ) բառի մասին երկու կարծիք է հայտնվել: Հայ.-փոյուզական մերձավոր ցեղակցության վարկածի կողմնակիցներն այդ բառը փոյուզ. համարվող սատիլլա, «Մեծ արջի համաստեղություն» ու սրա հետ կապված

თათინ «կառք» բառებի ჩეთ მწასები წარიგნოւմ են հ.-ե. \*k'at - «պայքարել, կովել» արմատից՝ Ենթադրելով «մարտակառք» սկզբնական իմաստը և սայլ ու σάτιλլա բառերի համար Վերականգնելով փոյտգահայլ. \*satilijs նախաձեզ: Այլ լեզվաբաններ հայ. բառը համարում են պարզապես փոխառություն [Աճառյան 1940, այլև Աճառյան 6, 71]: Այժմ կարելի է հաստատված համարել, որ հիշյալ բառերին փոյտգական ծագում Վերագրելով խիստ կասկածելի է: Չի կարելի ապացուցված համարել նաև հիշյալ բառերի «մարտակառք» նախնական իմաստը և այդ բառերը հ.-ե. \*k'at-արմատից წիեցնելու փորձը: Եթե հայ. սայլ բառը փոխառյալ է փոքրասիհական որևէ լեզվից, ապա պետք է կարծել, որ միջանավորային տի փոխվելու յի և սրան հաջորդող ձայնավորի անկումը տեղի է ունեցել հնագույն հայերենի շրջանում՝ մ.թ.ա. XII դարից հետո» [Զահուլյան 1970, 18]:

Իսկ երկրորդ դեպքում նկատի է առնվում այն հանգամանքը, որ «Ո. Շմիտը [Glotta 44, 1967, 148-151] փորձել է ապացուցել σάτιլլա «մի համաստեղորդյուն» (\*«սայլ», «կառք») բառի բրակյան ծագումը, [Զահուլյան 1987, 311]:

3. Բառի մինչև այժմ եղած ստուգաբանության փորձերը դառնում են միանգամայն անհավատի, եթե նկատի ենք ունենում հ.-ե. լեզուների մեջ «անիվ», «անվավոր փոխադրամիջոց» գաղափարի համար երևան բերվող ստուգաբանական և տիպաբանական նոր տվյալները, ինչպես նաև այդ առնչուչությամբ հայերենի համապատասխան փաստերը՝ բաղկած ոչ միայն գրական հուշարձաններից, այլև հայ. բարբառներից:

Այս դեպքում ևս գործ ունենք հայ. բառի ոչ թե փոխառության, այլ բնիկ լինելու հետ: *Սայլ* բառը, կարծում ենք, ծագում է հ.-ե. \*k[<sup>h</sup>] el- «անիվ, անվավոր փոխադրամիջոց» բառից, որը զուգահեռներ ունի ցեղակից լեզուներում. հիմլ. cui «սայլ», հիմլ. hvel «անիվ», պրոս. kelan «անիվ», լատվ. du-celis «երկանիվ», հոլավ. kolo, սեռ. hnл. kolese «անիվ», հոգն. ուղղ.-հայց. kola «սայլ», այլև լատ. colus «մանիչ», «մանված թել, մանվածք» [Гамкрелидзе, Իվանով 1984, 818]: Այնուհետև, հ.-ե. այդ ձևն առաջացել է \*k[<sup>h</sup>] el- «պտտվել», «շարժվել» բայահիմքից, որը ևս ունի զուգահեռներ ցեղակից լեզուներում. հիմնլ. carati «շարժվում է», «քափառում է», «գնում է», ավեստ. čarati «շրջվում է, շոր է գալիս», ալր. siéll «շրջվել», «քերել» և այլն [Ցույն տեղում, 718]: Իսկ այդ փոխադրամիջոցի երևան գալու

Ժամանակ է առանձնացվում մ.թ.ա. 4-րդ հազարամյակը, ընդ որում գործադրված այն տարածքում, որ ճգփում է Անդրկովկասից մինչև Վերին Սիցագետք, այնուհետև այլ տարածքներ [հմնտ. նոյն տեղում, 869-870]:

4. Այնուհետև, անհրաժեշտ է նկատի առնել նաև այն հանգամաննը, որ հ.-ե. \*k<sup>[h]</sup>° el- բառ(արմատ)ից ունենք նաև \*k<sup>[h]</sup>° (e/o) k<sup>[h]</sup>° ելոկրկնարմատ ձևը, որը նույնպես իր ծագումնային արտացոլումն է գտնում ցեղակից լեզուների մեջ. ազն. Ա կոկալ «սայլ», քուչ. Բ կոկալ «սայլ», հինդկ. cakrá- «անիվ» (Ուկավեղայում նաև «արևի ակ՝ անիվ»). հմնտ. հայ. արեգակն «արևի անիվ», «տարեշրջան»), ավեստ. չախրա-«անիվ» (հմնտ. հայ. ջահրայ «ճախարակ», «մանելու գործիք», չարխ «քախստի անիվ», ճախր «պտույտ, շրջապտույտ», ճախարակ «անիվ», «անվավոր գործիք». Hüb schmann 1895-1897, 186, Աճառյան 3, 1977, 172-174), հուն. հուն. կուկլօս «շրջան», «անիվ», փոյպոգ. կιկլոն (Հեսիք). «Քույլը (համաստեղություն)», «սայլ», հոռու. կոլա «Մեծ արջ (համաստեղություն)», հիսլ. հյոլ, հվել «անիվ», հանգլ. hweogol, hweol «անիվ», անգլ. wheel «անիվ», մազերմ. wēl «անիվ» և այլն [Գամկրելիձե, Իվանով 1984, 718, 737-738, 869-870, այլև Շիրոկով 1991, 57-64]:

Տիպարանական առումով այդ կրկնակ արմատն իր գուգահետներն ունի նաև ոչ-հ.-ե. լեզուներում. հիր. gilgāl, galgal «անիվ», արամ. galgal «անիվ», վրաց. gorgal- «անիվ», «շրջան», շում. GIGIR «մարտակառք» և այլն [Գամկրելիձե, Իվանով 1984, 718]:

5. Ելնելով հ.-ե. k<sup>[h]</sup>° el-, ինչպես նաև կրկնավոր կազմություն ունեցող \*k<sup>[h]</sup>° (e/o) k<sup>[h]</sup>° lo- բառարմատների ձևական և իմաստային մերձակորությունից, ինչպես նաև դրանց՝ ոչ-հ.-ե. լեզուների հետ ունեցած տիպարանական ընդհանրություններից, գտնում ենք, որ հայ. ոչ ընդհանուր ճանաչում ունեցող սայլ, այլև որոշ բարբառներում պահպանված զ’ալզ’ալի «երկանիվ սայլ» բառների ծագումն ավելի հին է, քան որ մինչև այժմ կարելի է եղել կարծել: Ավելի ճիշտ կինհի ասել, որ դրանք բնիկ բառեր են, քան փոխառություն: Ընդ որում հայ (բրբռ.) զ’ալզ’ալին (Մոլշ, Ալաշկերտ և այլն), ավելի հին է, քան սայլը, եթե ընդունենք, որ այդ ձևում քնային (եթե ոչ «կատկային») զ’ն ժամանակի առումով պիտի նախորդած լինի ս-ին (զ’ալ- ձևի կրկնությամբ՝ զ’ալ-զ’ալի): Մյուս կողմից, պեսոք է ենթադրել, որ ա) այն հ.-ե. միասնության շրջանից ծառանզված ինքնուրույն զարգացում է հ.-ե. \*k<sup>[h]</sup>° (e/o) k<sup>[h]</sup>° lo-> հայ. (բրբռ) զ’ալ-զ’ալ-ի, բ) ըստ

այլմ (տիպարանական) ընդհանրություն պիտի ունեցած լինի շում. GIGIR «մարտակառք», հիր. *gilgāl*, *galgal* «անիվ», արամ. *galgal* «անիվ» ձևերի հետ, եթե հաշվի ենք առնում հ.-ե. \**k[<sup>h</sup>]°ek[<sup>h</sup>]°lo-*, շում. GIGIR, սեմ. \**galgal*, քարթվ. \**gar-* (նաև \**bəgar-*), այլև հին. (< հ.-ե.-*hg*) \**gr* «սրբազն ծի» տիպարանական համարժեքությունը (սայլից՝ առարկայից) > քարշող ուժ՝ ծի իմաստային զարգացում):

6. *Սայլ-ը*, ինչպես նաև *գ'ալգ'ալի-ն*, իբրև մշակութային (մանավանդ ծիսական) երևոյթ, որոշակի «ժառանգորդություն» ունի հ.-ե. \**k[<sup>h</sup>]°el-*ի առասպեկտարանական իմաստավորումների հետ: *Սայլ-ը* «երկանիվ կամ քառանիվ փոխադրամիջոց», *գ'ալգ'ալի-ն* «երկանիվ փոխադրամիջոց» մեծ դեր խաղացած պիտի լինեն ոչ միայն Հայաստանի, այլև առհասարակ Առաջավոր Ասիայի մշակութային կյանքում: Լճաշենի և այլ վայրերի պեղումներից հայտնաբերված երկանիվ, այլև քառանիվ այդ փոխադրամիջոցը մինչև վերջին ժամանակներս թվազրվում էր մ.թ.ա. 2-րդ հազարամյակով [հմնտ. Պոտրովսկий 1959, 153, Մարտիրոսյան 1969, 39-40], թեև եղել են նաև ավելի վաղ ժամանակով թվազրման փորձեր. «Սյունիքի ժայռանկարներում մի քանի տասնյակ ժայռաքեկորների վրա փորված մ.թ.ա. IV-III հազարամյակների սայլերի պատկերների զուգահեռներ են Սևանի ավազանի կուրգաններում՝ Ներքին Գետաշենի (Ն.Աղիաման), Ե.Լալայանի և Լճաշենում Հ.Մնացականյանի հայտնաբերած միասունի (իմա՝ *գ'ալգ'ալի* – Վ.Հ.), երկունի (իմա՝ *սայլ* – Վ.Հ.), սկավառակած, ճաղեր ունեցող փայտե անիվներով սայլերը, որոնք վերաբերում են մ.թ.ա. II հազարամյակի վերջերին [Մհացականյան 1960, 139]: Այնինչ, բոլորովին վերջին տարիներին, հատկապես 70-ական թթ. հետո երևան եկած թե՛ լեզվաբանական և թե՛ հնագիտական աշխատություններն այդ ժամանակաշրջանը հաստատապես հասցնում են մինչև մ.թ.ա. 4-րդ հազարամյակը [հմնտ. Littauer-Crouwel 1974, 20-37, 1977, 1-7, Գամկրելինդզե, Իվանով 1984, 718, 869-870 և այլն]:

7. *Սայլ-ը* (<հ.-ե. \**k[<sup>h</sup>]°el-*) ավելի նոր է, հնչյունական անցումը՝ ա) \**k[<sup>h</sup>]° > u, p) \*e > t (> այ. հմնտ. բրրո՛ւել, որում առհասարակ նոր քարքառային երևոյթ է դիտվում ե-ի առաջացումը զրաբարի այ երկրաբարից՝ վերջինիս պարզեցման օրենքի հիման վրա): Այնինչ *գ'ալգ'ալի-ն* ավելի հին պիտի լինի, որովհետև՝ ա) հ.-ե. \**k[<sup>h</sup>]° > հայ. գ* (քմային կամ «կատակային» *գ*) անցումն առհասարակ հին երևոյթ է (հմնտ. հ.-ե. \**p[<sup>h</sup>]°enk[<sup>h</sup>]° e > հայ. հինգ*), բ) ունենք հ.-ե. \**e/o**

Ճայնադարձի որևէ աստիճանի դիմաց հայ. *ա* (ոչ *այ*, կամ բրբ. *է* կամ *է*, ինչպես *սել* բառում), այսինքն՝ *սայլ-ի* *այ* երկբարբառի համեմատությամբ *ա* ճայնավորով ձևի առկայություն, եթե նկատի չունենանք այն հանգամանքը, որ հայերենում հնարավոր է *մայր>մար-ել* «մայր մտնել») [Jahukyan 1986-1987, 29-33]:

Այսպիսով, կարելի է մտածել, որ հայերենի հնագույն շրջանում գործածված *սայլ* և *\*զ'ալ* (*>զ'ալ-զ'ալ-ի*) բառերն ունեն հ.-ե. ծագում, այսինքն՝ փոխառյալ չեն հայերենի հետ շփումներ ունեցած շրջակա որևէ (ցեղակից կամ ոչ-ցեղակից) լեզվից: Եվ ըստ այդմ *սայլ*, ինչպես նաև (բրբ.) *զ'ալզ'այի* (*<\*զ'ալ*) բառերը համարում են հայերենի հ.-ե. ծագման «երկրագործություն, բուսականություն» բառիմաստային (թեմատիկ) խումբը, եթե ոչ միաժամանակ «կրոն, նախապաշար-մունք» բառիմաստային (թեմատիկ) խումբը՝ կապված «Բույլը կամ Սեծ արջի համաստեղություն» հավատալիքի և դրան առնչվող հայերի պատկերացումներում երբեմնի եղած ծիսական որոշակի երևույթի հետ:

### Հայ. *արտախոյր<արտ* («դուրս») + *\*չօծ*

1. Հայերենում կան բազմիցս ուշադրության արժանացած, սակայն առ այսօր հավաստիորեն չստուգարանված բառեր: Դրանցից է Խորենացու երկում հանդիպող *արտախոյր* բառը՝ գործածված հայոց իին վիպասանքի «Տենչայ Սաքենիկ տիկին» հատվածում [Խորենացի 1913, 84]: Հիշյալ հատվածը, ինչպես նշել ենք, փոխարերական խոսքի նմուշ է, փոխարերացումը կատարված է հերանուական մտածողության շրջանակներում [Համբարձումյան 1995, 227-236]: Եվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ հատվածը հայոց վիպասանքում «բամբառակ երգերի» ցայտուն օրինակ է [Գ.Տեր-Մկրտչյան 1979, 131]:

2. Հիշյալ հատվածի մեկնաբանման շուրջ առկա է բանասիրական, աղբյուրագիտական և լեզվաբանական բավականաշափ գրականություն, արտահայտվել են զգալի բնով կարծիքներ: Դրանց ժամանակին անդրադարձել է Հ.Աճառյանը՝ հարցը քննության առնելով ոչ միայն առանձին, այլև բառարանագրական աշխատանքի ընթացքում [Աճառյան 1908, 124, այլն՝ 1, 1971, 340-342]: Կան նաև կարծիքներ, որոնք դուրս են մնացել Աճառյանի ուշադրությունից:

3. Լեզվաբան-բանասերների մի մասը *արտախոյր* բառը դիտել է փոխառություն՝ բառի մեջ մտցնելով բառակազմական ինչ-ինչ փոփոխությունները: Դիշտ է նկատում Գ.Պատկանյանը, որ «քոլոր թարգմանիչները սկզբնական զ տառը ընդունում են հայցական հոլովի ցուցիչ: Միայն Լազարդն է (Arm. Stud., 53) դիտում *զարտախոյր* և այն նույնացնում պարսկ. zardachwar-ի հետ» [Պատկանյան 1882, 24]:

Ասենք, որ Պ.Լազարդը նշում է ոչ միայն այլ բառի ուղիղ ձևը զ մասնիկով հանդերձ, իրեն բառի արմատի անտրոհելի տարր, այլև գտնում է, որ այն առնչվում է պարսկ. zardxau «մի տեսակ ծաղկի անուն», որն այլ բան չէ, բան աղավաղված (Աճառյանի բառով՝ «աղճատված») zardxwar բառից գոյացած մի ձև [Lagarde 1877, 53]: Հ.Հյութշմանը, ինչպես գիտենք, մերժում է Պ.Լազարդի ստուգաբանությունը՝ նշելով, որ «բառի իմաստը և կիրառության տեղը դեռևս բավական մուր են» [Hübschmann 1895-1897, 150]: Հետագայում լեզվաբան-համեմատաբանները (օրինակ՝ Հ.Աճառյան, Գ.Զահուկյան), անկախ մեզ հետաքրքրող հատվածին առնչվելու պատեհությունից, հավանաբար խուսափել են որևէ ձևով այն ստուգաբանելուց, համարել են կամ անստուգաբանելի բառ, կամ էլ որևէ վերաբերմունք չեն հայտնել նախկինում եղած ստուգաբանությունների (օրինակ՝ Լազարդի, Հյութշմանի և այլն) նկատմամբ [Աճառյան 1, 1971, 340-342, Զահուկյան 1987, 367]:

4. Մենք հակված ենք կարծելու, որ *արտախոյր-ը* ոչ թե ածանցավոր, այլ բարդ բառ է՝ կազմված վաղնջահայերենում գործածված *արտ* «դուրս» [Խմնտ. Աճառյան 1, 1971, 340, սյունակ 2, վ. 6] և *խոյր* «արևելյան բազ, պսակ, փաքրոց, ավելի իին՝ ծածկոց» բառերից (Խմնտ. ապախուրել «զլուխը բանալ»): *Արտախոյր-ը* թերթած է Երեմիա Սեղրացու բառարանում, սակայն ոչ թե այդ, այլ *արտախոյրակ* («արտաքիմ պսակ, կամ վիճակ, որպես բոլոր կապ ձգեն ի սին, եւ թէ այլ ինչ») ձևով [Երեմիա Սեղրեցի 1975, 41]: Մխիթար Սեբաստացու բառարանում ևս *արտախոյր-ը* թերթած է *արտախոյրակ* ձևով, որն էլ բացատրվում է հետևյալ կերպ. «Բառս այս ելանէ ի բառէն խոյր, որ է ծածկոյք զիսոյ, այսինքն զիսարկ կամ թագ և այլն: Եւ աստ *արտախոյրակ*, այսինքն՝ արտաքուստ երևելի խոյրակ, որ և ուսմկօրէն ասի մենտիլ, զոր ի հնումն մեծամեծ իշխանք արևելից դնէին ի գլուխս իրեանց» [Սեբաստացի 1, 1749, 112]:

5. *Արտ* «(տնից) դուրս, արտատեղի, կալ» բառն ավելի ուշ՝ իին գրական հայերենում, ավելի ստույգ՝ «ետդասական գրաբարի»

փուլում է, որ վերածվել է նախամասնիկի. հունաքան հայերենում այն գործածվելիս է եղել որպես նախածանց (համարժեք հուն. ἔχ-, ἔξ-ին, հմմտ. ἔχπνεω «արտաշնչել», ἔχφέρω «արտաքերել» և այլն), որն էլ մեզանում առավել ուշ անցել է լատինարան հայերենին (համարժեք՝ լատ. ex-ին. հմմտ. ex-porto «կրում եմ, շահում եմ, տանում եմ», exemplum «օրինակ, նմուշ», experientia «սովորություն, փորձ» և այլն) և գործածվում է նաև մեր օրերում՝ անցնելով արդի գրական հայերենին:

6. *Խոյր-ը*, ըստ Հյուրշմանի, փոխառություն է իրանականից <պահի. \*xōd (հմմտ. ավեստ. խածա- «սաղավարտ», հպարս. խաւա- «զլիարկ», պար. xwd, այլ խօճ, պարս. xōi «սաղավարտ», աֆղան. xol, օս. xodā, խնձ «խոյր» և այլն) [Hübschmann 1895-1897, 160, Աճառյան 1, 1971, 392, Զահուկյան 1987, 527, Պերիխանյան 1993, 9-11 և այլն]: Իսկ իրանական ձևը միացվում է լատ. cūdo «քաղիքե սաղավարտ» բառին, և դրանք հանգեցվում են հ.-ե. \*squeu- «ծածկել» արմատին:

7. Ըստ այսմ, *արտախոյր-ի* առաջին բաղադրիչը դեռևս չստուգաբանված (հավանաբար՝ թնիկ) բառ է, իսկ երկրորդը՝ իրանական փոխառություն, որն ունի հ.-ե. ծագում: Ուստի պետք է ենթադրել, որ այն ոչ թե ամբողջովին, այլ մասամբ՝ երկրորդ բաղադրիչով է փոխառյալ, այսինքն՝ բառն ունի հայերեն կազմություն, ընդ որում *ա հոդակապով*:

8. Մեզ հետաքրքրող հատվածում *արտախոյր* բառը գործածված ենք գտնում «դորս ընկած (կլորապուն, բղորածե, շրջանածե) մի բան» իմաստով, այն փոխաբերաբար, տվյալ համատեքստում նշանակում է «ամորձի կամ ամորձիներ»: Ավելորդ չենք համարում նշել, որ Հ.Աճառյանն «Արմատական»-ում (հ.1, էջ 339-342, հ.2, էջ 392) առանձնացնում է *արտախոյր* բառը՝ ենելով միայն Խորենացու թնագրի սույն հատվածի ընձեռած նշանակությունից, որն էլ այլ կերպ է բացատրվում: Այն նույնն է, ինչ Ազարանգեղոսի երկում կիրառված *արտախոյր-ը* [Ազարանգեղոս 1909, 7]: Աճառյանի բառարանում դրանք բերվում են իրարից առանձին բառահոդվածներով, որով ստացվում է այն տպավորությունը, թե այս դեպքում հայերենում գործ ունենք համանուն երկու *արտախոյր* բառի հետ: Սակայն դա, կարծում ենք, այդպես չէ: Իրականում Ազարանգեղոսի թնագրում *արտախոյր-ը* գործածված է ուղղակի՝ «արքայական բագ» իմաստով, իսկ Խորենացու երկում, ինչպես նշեցինք, գործածվելիս է եղել փոխաբերական, բառի անուղղակի իմաստով: Ուստի այնքան էլ տեղին չէ, եթք Աճառյանի «Արմատականի» մեջ նույն բառի երկու

կիրառությունները բերվում են իբրև առանձին բառահոդվածներ: Եվ այս վերջինը, ինչ խոսք, նախորդում է Ազարանգեղոսի գործածությանը, ուստի բառը հնագույն հայերենում ունեցել է թե՛ ուղղակի (որպիսինի համար, ցավոք, չունենք վկայություն), թե՛ փոխաբերական կիրառություն:

## Հայ. խաւարտ< խաւ + հ.-ե. \*trəg'-

1. Այս բառը ևս գործածված է հայոց հին վիպասանքի «Տենչայ Սարենիկ տիկին» հատվածում [Խորենացի 1913, 84]: Ընդ որում (*Ճարտախոյր խաւարտ* բառակապակցության մեջ, հետադաս որոշային հարաբերությամբ արտահայտում է փոխաբերացված հատկանիշ: Այդ բառը չենք գտնում Եր. Մեղրեցու բառարանում, իսկ Մխ. Մերաստացին բառը հետևյալ կերպ է բացատրում. «է. հասարակ (խմանդիանուր – Վ.Հ.) ամենայն բանջարեղինաց կամ խոտեղինաց, զորս խարշելով կամ առանց խարշելոյ ուտեն մարդիկ, որպիսի է աղցանն, սամիթն և կամ այնք, որք ուամկօրէւ կոչին քերեվիզ, մաղտանոս և այլք նմանք» [Մերաստացի 1, 1749, 375, սյուն. 2]: Հետազայում ևս ուսումնասիրողների գերակշիռ մասը, հետևելով Մխ. Մերաստացուն, այնուհետև «Նոր հայկացյան բառարանի» հեղինակներին, *խաւարտ-ը* դիտել է իբրև մի բուսանուն:

Այս բառի մեկնարյան առումով, կարծում ենք, միանգամայն ճիշտ է Հ. Աճառյանի մոտեցումը՝ *խաւարտ-ը* դիտելով *արտախոյր* գոյականի ածականական լրացումը՝ իբրև բառակապակցության հետադաս որոշիչ անդամ (*արտախոյր խաւարտ*) [Աճառյան 2, 1973, 351-352]:

2. *Խաւարտ-ը* բաղադրված է *խաւ* և *արտ* բառերով. *Խաւ-ը* «աղվամազ, մազաշերտ, բավ շերտ» հայերենում դեռևս չստուգաբանված բառ է, իսկ *արտ-ը* բավականին հին է: Վերջինս ոչ մի կապ չունի, գոնե վաղնջահայերենի շրջանում, առավել ևս հին գրական հայերենի կտրվածքում լայնորեն գործածվող, վերը՝ *արտախոյր* բառի դեպքում առանձնացված *արտ* «արտաքին կողմը, դուրս» բառի հետ: *Խաւարտ* բառի մեջ հանդես եկող *արտ-ը*, մեր կարծիքով, ստուգաբանորեն կապվում է այլ բառերի հետ, այն է՝ հայերենում ծագումնային ընդհանրություն ունի մի կողմից՝ *արատ* «արածել», *արաւտ* «խոտ, արտո», մյուս կողմից՝ *արած(ել)*, *(տու)արած* (*տուար < հ.-ե. \*dɪrəgo+արած*), բրոք. *արձ(ալ)* բառերի հետ (*տ~ծ-ի* համար հմնոտ. *խայտ-խայժ*, *բուտ*, *բտել-բոյժ*, *բուծանեմ*,

պիղծ-պղտ-որ, հ-պարտ-պարծ-ենամ, տատանեմ-ծածանեմ, նաև՝ խեղդ-հեղդ և այլն):

3. *Արատ*, *արաւտ* արմատը (ծայնադարձի ա/աւ աստիճանով) ծագում է հ.-ե. \*trəg'- արմատից. հմմտ. հուն. տրակ «կրծել, ուտել», բոլու. Ա և Բ trāsk «ծամել» [տե՛ս Զահուկյան 1987, 153, 253]<sup>1</sup>: Այնուհետև նույն արմատից է ծագում նաև արտ-ը (հմմտ. հայ. (քրո.) արծ-ալ «արածել»՝ կազմելով ծայնդարձի ստորին՝ զրո աստիճանը) [տե՛ս Աճառյան 3, 1957, 37]: Ուստի հայերենում միմյանցից անհրաժեշտ է տարբերել արտ քանի երեք համանուն՝ արտ (<հ.-ե. \*āg'-ո «դաշտ, արտ»), արտ(ա)- («դուրս, դրսի կողմը», այլև «դուրս» իմաստով նախածանց) և արտ (<հ.-ե. \*trəg'- «արածել, արտ»): Պետք է կարծել, որ ստուգաբանորեն արտ-ը («ճարակ, արած-ել, արոտ») կապվում է արատ (արած-ել), արաւտ քառերին, իբրև ծագումնային ընդհանրություն ունեցող քառեր: *Արատ* և *արաւտ* քառերի այն ստուգաբանությունը, որ բերվում է Գ. Զահուկյանի կողմից, այդ քառերը ծագած համարելով հ.-ե. \*trəg'-ից [տես նաև Աքրահամյան 1958, 62-63], տվյալ դեպքում միանգամայն ընդունելի է և համոզիչ: Սակայն պետք է ավելացնել, որ այն սահմանափակվում է արատ, արաւտ և արած քառերով, այսինքն՝ չի տարածվում արտ-ի վրա, իբրև նրանց հետ ծագումնային ընդհանրության մեջ գտնվող մեկ այլ փառագույն կիրառություն ունեցած քառ: Այնինչ, ինչպես տեսնում ենք, այդ շարքը համալրվում է արտ («արոտ, արած-ել») քառով, որպիսով ավելի է ամբողջանում մեր պատկերացումը ծագումնային որոշակի ընդհանրություն ունեցող քառերի այդ փնջի, այն է՝ «երկրագործություն, բուսականություն» քառիմաստային (թեմատիկ) խմբի վերաբերյալ:

4. *Խաւարտ* բարդ քանի արտ քաղադրիչը բնիկ է, ունի հ.-ե. ծագում: Հետագայում այն քաղադրիվել է խաւ-ի հետ, որն էլ խորենացու սույն հատվածում գործածվել է փոխաբերական իմաստով, որ նշանակում է, թե բուն, ուղղակի իմաստով կիրառություն վերաբերում է ավելի վաղ ժամանակի: Եվ ըստ այդմ կարելի է կարծել, որ մեզ հետաքրքրող հատվածում *խաւարտ* քառը փոխաբերաբար արտահայտելիս է եղել «աղվամազով, կարծ

<sup>1</sup> Ի դեպ, հեղինակի աշխատության բառային գուգաբանությունների ցանկում նշվում է թոխ. գուգահեռության նախն (էջ 153), իսկ բարբառային հնչյունական տարբերակների թվարկման ժամանակ այդ գուգահեռը չի նշվում (էջ 253): Եվ թոխ. գուգահեռը բերում ենք ըստ հեղինակի մեկ այլ գործի [Դյառքան 1982, 57]:

մազաշերտով ծածկված, պատված, այլև՝ աղվամազի, մազաշերտի միջից կամ տակից երևացող, մերկացած» իմաստը:

Հայ. *տից* (<*տիք*)<հ.-ե. \*di-t

1. Խորենացու «Տենչայ Սարենիկ տիկին» հատվածի մինչև օրս բավարար քննության շառնված, ավելին՝ դեռևս որոշակիորեն չառուգարանված բառերից է *տից* (<*տիք*)-ը [Խորենացի 1913, 84]: *Tiց* բառը բազմից տեղիր է տվել տարակարծությունների, եղել են բառի բազմաթիվ մեկնաբանումներ, բացատրության փորձեր, ընդհուպ բնագրային ձևի խմբագրումը կամ ուղղումը:

2. Բնագրում բառը գործածված է հոլովված ձևով. «Տենչայ Սարենիկ տիկին տենչանս՝ զոյց խաւարծի»: Կարծում ենք, որ այն ներկայացնում է հայ. *տիք* բառի հոլովված ձևը, այսինքն՝ կիրառված է ոչ թե իբրև անեղական բառ, այլ որպես սովորական հոգն. սեռ.-տր. մի ձև: Վերջինս ավելի նախնական է, և այն բավականին գործուն պիտի եղած լինի վաղնջահայերենում: Բառի երբեմնի, նախնական եղակին է \**տի* բառը, որն այդ ձևով ավանդված չենք գտնում գրավոր առյուրներում. այն նշանակելիս պիտի լինի «օր, հասակ, շրջան, ժամանակաշրջան» [Խմնտ. Զահուկյան 1987, 726, այլև 117, 217, 269, 401]: Այդ բառին Գ. Զահուկյանը ևս հատկացնում է «տարիք» ընդհանուր իմաստը: Սակայն ամեն դեպքում նկատի է առնված բառի բուն՝ ժամանականից իմաստը, ինչպիսին որ է նրա բառարանային նշանակումը: Այնինչ, այս հատվածում *տիք*-ը բառը գործածվելիս է եղել այլ՝ փոխարերական իմաստով, որը և բխում է բառի ուղղակի, բուն իմաստից:

3. Հայունի է, որ հայ. *տիք* բառը ծագում է հ.-ե. \*di-t ձևից. Խմնտ. անգլ. ուժ «ժամ, ժամանակ»: Միաժամանակ հարկ կա նշելու, որ Գ.-Զահուկյանը *տիք*-ը («տարիք») և *տի* («օր») արմատների համար տալիս է ընդհանուր *տէ-*, *տի* (հ.-ե. \*dei-) ձևը:

Ըստ այսմ, գտնում ենք, որ *զոյց* խաւարծի կապակցության մեջ *տից* ձևը այլ բան չէ, քան հայ. *տի* (չավանդված) բառի հոգն. սեռ.-տր. մի ձևը, որի հոգն. *տիք* ձևն է: Ցեղակից լեզուներում պահպանված հնարավոր զուգահեռներից առայժմ նշում ենք անգլ. ուժ «ժամ, ժամանակ» բառը, սակայն կարելի է վկայակոչել ուրիշ ձևեր և, եթե հնարավոր լինի պարզել հայ. այլ բառերի և ցեղակից լեզուներում դրանց ունեցած զուգահեռների հարցը:

4. «Տենչայ Սարենիկ տիկին» հատվածում գործածված ձևի *զ-ն*

նախտիր է և ոչ թե արմատի (անտրոհելի) մաս, ինչպես որ երբեմնի կարծել են որոշ հետազոտողներ: Այսպես, բառի եզ. ուղղ. ձևը եղել է տի-ն, իսկ հոգն. ուղղ. ձևը՝ տի-ք: Վերջինս հետազայում է, որ վեր է ածվել անեզական գոյականի: Եվ այդ տի-ն էլ հայերենի հնագույն շրջանում հոլովվել է որպես սովորական, այսինքն՝ ոչ իբրև անեզական բառ: Այստեղ առկա է թերականական վերախմաստավորում՝ սովորական բառից անեզականի վերածվելու ողջ իմաստաբանությամբ (*հմնտ. դի>դիք, հոգն. սեռ.-տր. դից «աստվածների»*):

### Հայ խաւարծի < խաւ + հ.-ե. trəg' -

1. Խորենացու «Տենչայ Սաքենիկ տիկին» հատվածի, այսպես կոչված, դժվարություն հարուցող բառերից չորրորդն է խաւարծի բառը [Խորենացի 1913, 84]: Այս բառի ստուգաբանության փորձերը մինչև օրս մնում են անհավաստի:

2. Խաւարծի բառը, կարծում ենք, ծագումով նույնն է, ինչ խաւարտ բառը: Այդուհանդերձ, դրանք քննության ենք առնում առանձին-առանձին՝ ելնելով ոչ միայն Խորենացու հատվածում այդ բառերի առանձնակի ներկայացրած կարևորությունից, այլև հայերենի բառապաշտում դրանց հստակ առանձնացման անհրաժեշտությունից:

Ի տարբերություն խաւարտի՝ խաւարծ-ը բառակազմական ի մասնիկի շնորհիվ վեր է ածվել գոյականի (*հմնտ. գեր-ի, գին-ի, բարտ-ի* «մի տեսակ ծառ», *յի-ի* «վի, լցված», *մայր-ի* «մի տեսակ ծառ», *տեղ-ի* և այլն) [տես Զահուկյան 1987, 231]: Ընդ որում դրանք միմյանցից տարբերվում են տաճ լծորդությամբ (*հմնտ. արածել-արաւտ, խայտ-խայծ, պիղծ-պղտ-որ* և այլն): Գ. Զահուկյանը թեականորեն խաւարծին կապում է խաւ բառի հետ՝ նկատի առնելով հետագա շրջանի խաւարծի (*«խաչնդել»*) ձևը [ճույն տեղում, 598]: Նման առնչություն տեսնելը վաղուց է հայտնի. նախկինում այդպես է կարծել և Գ. Տեր-Մկրտչյանը [տես՝ Գ. Տեր-Մկրտչյան 1979, 133]: Սակայն Գ. Զահուկյանը գտնում է, որ տվյալ դեպքում ևս այդ բառը կարելի է դիտարկել իբրև հարավկովկասյան (քարքելական) լեզուների հետ հայերենի ունեցած առնչությունների մի օրինակ, թեև հատուկ նշում է, որ թե՛ մի քանի այլ և թե՛ խաւարծի «բառերի դեպքում նմանությունը պետք է պատճառական համարել, եթե չենք բաղադրենք բաղարկություն»: Ըստ Գ. Զահուկյանի՝ համեմատելի են. խաւարծ «ծիլ» (ուշ՝ խաւարծի)

«խաշնդեղ»։ հայ. *խաւ-ի՞ց*) ~ վրաց. γωαρյլι – «մոլախոտ, չարություն», մեզը. շարյլ – «ժամատախոտ դժբախտություն», ճան. շարյլ – «քույն, դժբախտություն», վրաց. -գան. \*շարյլ «folium temilentum, որում» [Յույն տեղում, 598]:

3. Ինչպես *խաւարտ*, այնպես էլ *խաւարծի* բառի երկրորդ՝ *արծարմատը* ծագում է հ.-ե. \*trēg-՝ «արածել, արոտ» ձևից։ Առաջին դեպքում ունենք հ.-ե. \*g’> հայ. տ, իսկ երկրորդ դեպքում հ.-ե. \*g’> հայ. Ժ համապատասխանությունը, որն այլ բան չէ, բան հայոց լեզվի հնագույն շրջանում հանդես եկած տարարմատ գոյություն, եթե բացառենք Ժամանակային տարբերության հնարավորությունը։

4. Վիպասանքի այդ հատվածում *խաւարծի* բառն արտահայտում է «աղվամազով ծածկված բույս՝ ընձյուղ, ծիլ» իմաստը, իսկ փոխաբերաբար՝ բոլորովին այլ իմաստ, ինչպես *խաւարտ* բառի դեպքում էր։ Եվ ի տարբերություն ու ի հակակշիռ արտախոյր-ի, որ նշանակում էր «աղվամազով ծածկված, դուրս ընկած կլորավուն, բոլորածն (մի բան)», այս դեպքում «քամբառակ» խոսելածեով մատնացույց է արվում *խաւարծի*-ն։

Այստեղ վերջում նշենք, որ հիշյալ հատվածում բառաքննական և ստուգաբանական դժվարություն հարուցած չորս բառերը կազմելիս են եղել երկու բառակապակցություն, մեկը՝ *զարտախոյր խաւարտ*, իսկ մյուսը՝ *զտից խաւարծի*։ Առաջինը հետադաս որոշային, իսկ երկրորդը առաջադաս հատկացուցչային բառակապակցություն է։ Ըստ որում մի դեպքում զնախդիրը դրված է իր բուն տեղում, իսկ մյուս դեպքում այն իր վրա է կրում լրացումը. երկրորդ դեպքում, համապատասխան հին գրական հայերենի շարադասության, կանոնական կիմենք, եթե ունենայինք *զխաւարծի տից*։ Պետք է նկատի ունենանք, որ շրջուն շարադասության երևույթներ նկատելի են նաև վաղնջահայերենում (հայերենի հնագույն փուլերում)։

Այսպիսով, Խորենացու երկում հանդիպող *արտախոյր, խաւարտ, տից* և *խաւարծի* բառերը, եթե նկատի ենք ունենում հայոց վիպասանքում դրանց կիրառվելու հանգամանքը և փոխաբերացված խոսքում գործածվելու իրողությունը, կարող ենք դիտել իրենք «մշակութային» բառեր, ավելի կոնկրետ՝ «զգացմունք (ֆիզիկական որոշ դրսւորումներով)։ Խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ» բառիմաստային (քենատիկ) խմբին պատկանող անվանումներ [Խմնտ. Զահուկյան 1987, 218]։

## Հայ. կամճ < h.-ե. \* ak<sup>[h]</sup>men

1. Հայերենում գյուղատնտեսության (Երկրագործության) բնագավառի զգալի բվով բառեր ունեն հ.-ե. ծագում. անդ «պաշտ, հանդ», արար «արոր, փայտե գութան», արտ «մշակովի հողատարածք», զարի, եղամ «մի տեսակ գործիք», կորի «արտամիջան առու», հերկ «վարած հող», ցար(ան) «մի տեսակ գործիք» և այլն: Մշակովի բույսերի, նրանց մշակման տեղի և միջոցների անվանումները հնդեվրոպացիների կարևորագույն գրադարձներն են նշանակելիս եղել: Ուստի այդ բնագավառին վերաբերող անվանումները հ.-ե. լեզուների բառապաշարի մեջ գրադարձնեն որոշակի տեղ: Հայերենում ևս թիշ չեն նման բառերն ու անվանումները [տե՛ս Աճառյան 1940, Զահուկյան 1987, 212-213]: Թիշ չեն նաև այնպիսի բառերը, որոնց հ.-ե. ծագումը դեռևս բացահայտված չէ կամ ոչ հավաստի ձևով է մեկնաբանված: Հ.-ե. ծագում ունի նաև հայ. կամճ «կալսիչ, ծեծիչ» բառը:

2. Կամճ բառը հայ. իին գրավոր աղբյուրներում հանդիպում է մեկ-երկու անգամ՝ կամուճս, կամացն ձևերով [Ոսկեբերան 1826, 745, Քուգանի 1987, 220]: Ի դեպ նշենք, որ ժամանակին բանասեր Ա.Վարդանյանը Բուլանդի հիշյալ կամացն ձևը դիտում է իրք սխալագրություն և բնագրում ուղղում՝ կամաճց, գտնելով որ բառի ուղղ. պիտի լինի կամճ, հոգն. ուղղ. կամուճը, հոգն. սեռ. կամաճց, որը ընդունելի պիտի համարել [Վարդանյան 1921, 7-8, 410-411]: Այդ բառը իին հայերենում գործածվել է նաև բարդության մեջ՝ կամասայիլք (<կամասայյ), կամասայից, կամճավար և այլն [Ա.Գիրք, Եսայ. ԻԵ, 10-11, Զաքարիա Սարկանաց 1870, 83]:

3. Հ.Աճառյանը կամճ-ը համարում է «աճստույզ բառ», թեև փորձում է այն կապել ցեղակից լեզուներից հսկավ. ցումենո, ուսւ. ցյմհօ և այլ ձևերի հետ, որովհետև ինչպես ինքն է գրում, «ըստ Pogodin-ի (տե՛ս Berneker 1, 362) այս բառերը ներկայացնում են \*gumino- բարդությունը, ուր \*g<sup>u</sup>-< հնիս. \*g<sup>u</sup>ծոս «կով, եզ», մոնց մէտի=լիտ. մոն, մոնտ «կոխոտել» [Աճառյան 2, 1973, 502. հմմո. Փասմեր 1, 1986, 474]: Ծագումնային նման կապը ժամանակին մերժել է Ա.Մելյեն [տե՛ս Աճառյան 2, 1973, 502]:

4. Զահուկյանը, իիմնվելով Հ.Աճառյանի հիշյալ սոուզաբանության փորձի վրա, կամճ-ը բխեցնում է հ.-ե. \*gem- «բռնել, սեղմել, ճնշել, ճխտել» բայից, իսկ կամճ-ը՝ հ.-ե. \*gmr-ից

[Զահուկյան 1965, 256]: Նույն արմատին է հանգեցվում նաև **ճմել-ը**, այլև հսկանդ. *kumla* «ճմել, ճզմել, ջարդել», ոռու. յատ (շմ) և այլն: Այնուհետև, հայ. **կամահարել** «արտահարել» բայի [Եր. Մելքոնի 1698, 154] **կամ** բաղադրիչը ևս նույնացվում է **կամն**, **կամ** արմատի հետ [Աճառյան 2, 1973, 500]: Այս դեպքում հարկ ենք համարում նշել, որ ա) անտեսված է Ա.Վարդանյանի բանասիրական ճզրտումը՝ կապված **կամացն** (<\*կամ) սխալագրության հետ, բ) **կամն-ը** հ.-ե. \**gem-*, իսկ ոչ ճիշտ **կամ** ձևը հ.-ե. \**gemb-* ձևերին հանգեցնելը բերևս տեսականորեն է ճիշտ, իսկ իրականում տեղին չէ, գ) **կամն** և **ճմ(ը)** արմատները կապ չունեն միմյանց հետ, քանի որ իմաստով անհամատեղի են «ծեծել, կալսել» և «սեղմել, ճզմել», չնայած որ հակառակ դեպքում հարկ կլինի ապացուցել հայ. կ և Ծ հնչույքների ծագումնային ընդհանրությունը՝ իբրև նույն արմատի տարբերակների ձևորդներ:

Հետազայում **կամն** բառի ստուգաբանությունը Գ.Զահուկյանի կրողմից իսկ դիտվում է ոչ հավաստի, ուստի նշվում է հարցականով, այսինքն՝ «կասկածելի համարվող ձև», այլև հասուկ նշանով (+) զանազանվում է ավելի հավաստի, ստույգ ձևերից [Զահուկյան 1987, 125]: Դրանք արտացոլված են Յ.Պոկրոսու և Հ.Աճառյանի բառարաններում [Pokrosoy, 1-2, 1959-1969, Աճառյան 2, 1973, 502]: Այնուհետև մեկ այլ աշխատության մեջ ուղղակիորեն նշվում է հետևյալը. «Չիմանալով հայ. **կամն** «ծեծիչ» բառի ծագումն՝ անկարելի է հաստատել մի պատկանելությունը արմատին կամ ածանցին» [Ճայռքան 1982, 116-117, այլև 222]:

4. Մեր կարծիքով, հայ. **կամն** բառը ծագում է հ.-ե. \**ak<sup>[h]</sup>*-men «քար» բառից՝ իբրև -Շ հիմքով գրյական անուն. հմմտ. հինդկ. man-«քար», լիտվ. akmuô, akmuëns «քար», հոլան. kamъ «քար» [տե՛ս Գամկրելիձ, Իվանով 1984, 112, 184, 297]:

Այս առումով անհրաժեշտ է նշել հետևյալը: ա) Հ.-ե. \**k<sup>[h]</sup>-ն*, իբրև օրինաշափություն, տալիս է հայ. *g*, *ս*, *շ*, այլև բացառիկ դեպքերում՝ կ. հ.-ե. \**k<sup>[h]</sup>-čk<sup>[h]</sup>* > հայ. *ցախ* (*հմմտ.* հինդկ. śākha «ճյուղ», լիտվ. šakā «ճյուղ», պավ. socha «ցից, արոր», posochъ «զավազան», այլև գոր. hōha «զուրան»), հ.-ե. \**k<sup>[h]</sup>-er->* հայ. *սիրտ* (*հմմտ.* խեթ. ki-ir «սիրտ», սեռ. kar-di-a «արտի», հուն. κῆ «սիրտ», այլև հինդկ. śrad (<śrad-dhā «հավատար»), հ.-ե. \**k<sup>[h]</sup>u(c/o)n->* հայ. շուն. հմմտ. հինդ. լուվ. շու-վան-ա- «շներ», այլև հինդկ. š(u)vá, հոգն. սեռ. šúnas, լիտվ. šuo, սեռ. šuns, հուն. κύ, սեռ. κοս«շուն», շների կամ շան» և այլն, ինչպես նաև՝ հայ.

սկունդ «շուն, շնիկ» (*հմնտ.* լատ. *canis* «շուն», հիոլ. սկ, սեռ. *con* «շուն»), հ.-ե. \**suk[h]*<sub>ru</sub>-/\**suk[h]* *uro*> հայ. *սկեսոր* «ամուսնու մայր» (*հմնտ.* հալավ. *svekru* «սկեսոր», հուն. 'կօս «սկեսոր» և այլն) [Гамкрелидзе, Иванов, 1984, Ջայուն 1967, Szemerény 1964, Իլլիչ-Շվիթչ 1961]: բ) Ինչպես հայտնի է, նման տարրերակումն առնչվում է հ.-ե. լեզուների *centum* և *satem* բարբառային խմբավորմանը՝ իրենց օրինաչափություններով ու բացառություններով հանդերձ: Տվյալ դեպքում հ.-ե. քմային հետնալեզվային \**k[h]* -ին համապատասխանում է հայ. պայքական կ, այլև *սկ*, ինչպես նաև շփական շբաղաձայն [*հմնտ.* Աճայ 1956, 286-307, 293]:

Բոլորովին այլ է մոտեցումը, երբ փորձ է արվել հայ. *սկոմդ-ը* (<հ.-ե. \**k'ουօն-տօ* ձևով) կապել խոտ.-սակ. (սկյութ.) կամ սկյութ.-սլավ. լեզուներին [Աճայ 1965, 21-22]:

### Հայ. *սոնել* < հ.-ե. \**k'ern*

1. Հայերեն գրավոր աղբյուրներում չի հանդիպում *սոնել* (*սոն-ել*) բառը: Սակայն գործածվում է հայերենի մի շարք բարբառներում (Մուշ, Ալաշկերտ, Բուլանքիս, այլև Ապարան) և նշանակում է «հատիկը խոշոր աղալ»: Բառը գտնում ենք Հ.Աճայանի և Ս.Ամատունու բարբառային բառարաններում, ինչպես նաև Ե.Լալայանի կազմած ազգագրական հանդեսում [Աճայան 1911, 984, Ամատունի 1912, 599, Լալայան 1916, 77]: Այսօր ևս բառը գործածական է հիշյալ բարբառներում:

2. Բառը չենք գտնում Հ.Աճայանի «Արմատական բառարանում», ինչպես նաև հայերենին նվիրված ստուգաբանական այլ աշխատություններում [*հմնտ.* Աճայան 4, 1979, Ջայուն 1967, 1982, Զահուկյան 1987 և այլն]: Ուստի կարելի է կարծել, որ հայ. *սոնել* բառը չի եղել բառաքննական, առավել ևս ստուգաբանական ուսումնասիրության առարկա: Դա բացատրվում է բառի առանձնակի գործածությամբ, այսինքն՝ բարբառային բնույթով: Այնինչ տոն(ել)-ը բնիկ հայերեն բառ է, որ մեզ է ավանդվել բարբառային, այն է՝ ոչ ընդհանուր գրական գործառությամբ: Այն ներկայացնում է հ.-ե. ընդհանրությունից եկող որոշակի հասկացության անվանում՝ կապված բնատնտեսության մի որոշակի ոլորտի կազմակերպման հետ [տե՛ս Համբարձումյան 1996, 191-192]:

3. *Սոն(ել)* բայի իմաստը պիտի փնտրել *հատիկ* բառի մեջ,

որովհետև «խոշոր աղալ» իմաստի նախնական այլ բան չի եղել, քան «հատակոր անել, հատիկը երկու կես անել»: Աճառյանը, նշելով բառի գործածությունը միայն Մուշի բարբառում, ճիշտ է բացատրում իմաստը. «խոշոր աղալ, այնպես որ ցորենը կամ կորեկը երկու-երեք կտոր ըլլայ» [Աճառյան 1911, 984]:

4. Հայտնի է, որ հ.-ե. \*g'ernos նշանակում էր «հատիկ», որն ավելի շուտ կապվում էր սերմը ցանելու զաղափարի հետ, ուստի բնորոշ էր համարվում հ.-ե. արևամտյան լեզուներին [Աճառյան 1940, 16]: Իսկ առհասարակ «աղալու, մանրելու» իմաստի համար գործածվել է հ.-ե. \*k'orāy- «աղաց» բառ(արմատ)ը [Гамкрелиձե, Иванов 1984, 693]: Ըստ այսմ, հ.-ե. \*k'orāy- «աղաց» ձևից է ծագում հայ. երկան (*\*k'-lyr-awā*) բառը. հմմտ. \*g'orāwanā-, \*g'urāy-ānā, \*g'urā-ā ձևը [Hübschmann 1897, 444-445, Աճառյան 1, 1971, 61, Ջայուքյան 1967, 26, Զահուկյան 1987, 120, 450]:

5. Սեր կարծիքով, հայ. (բրբո.) *սոն(ել)* բառը ծագում է հ.-ե. \*k'orēt «աղաց» բառից, որի արմատի տարրերակ են հ.-ե. \*k'or- կամ \*k'or- (հմմտ. գոր. – qairnos «աղաց», հինդկ. gurū- «ծանր», հուն. βαρύς «ծանր», լատ. grauis «ծանր», լատվ. dzirus «երկանք», լիտվ. girtas (հոգն.) «երկանք», հսլավ. žtynovъ «աղաց») [Гамкрелиձե, Иванов 1984, 175]: Ըստ այսմ, ամենավաղ շրջանի հայերենում, այսինքն՝ հայերենի հնքուրույն լեզու դառնալու ժամանակ միևնույն արմատի տարրերակ են եղել *k'-ry-awā* (*\*k'-lyr-awā*) բառի \*ry-awā (*\*lyr-awā*) և *սոն-ել* բայի *սոն* (*<սոն-՛*) արմատը՝ ծայնավորման տարբեր աստիճաններով, այլև *կ/ս* տարրերակումով: Նման տարբերակումը զայխս է հ.-ե. ընդհանրության շրջանից, որովհետև վերջինիս մեջ ևս ունենք \*k'orēt- և \*k'orāy-, եթե ոչ նաև \*k'-r-ո-տարբերակումը [*նոյյին տեղում*, 93, 693, 868-869, 873]:

Ավելորդ չեն նշել, որ հեղինակները երկանք կամ աղաց գործիքի Եվրոպա բափանցելու ժամանակ են դիտում, ոչ անկախ Զ. Կլարկից, մերք մ.թ.ա. 1-ին, մերք մ.թ.ա. 3-րդ հազարամյակը, Առաջավոր Ասիայի տարածքից, որը թերևս վրիպում է, ոչ թե հակասություն [*տեսն նոյյին տեղում*, 694, 869]:

Հայտնի է նաև, որ հ.-ե. \*k'orēt- «երկանք» բառը փոխառյալ է սեմական լեզուներից. (հմմտ. սեմ. \*gurn- «կալ, հոսք» > ուզար. grn «հոսք», արար. taķ/grattu «հոսք. մամլատեղ», հիբ. \*gōren «հոսք», արար. ġarana «աղալ, մանրել», ցար- «հոսք») [*նոյյին տեղում*, 873-974]:

Ուստի ինչպես Երկան «Երկանք», այնպես էլ հայ. (բրբ.՝) *սոմ(ել)* «խոշոր աղալ» բառերն ունեն ծագումնային տևական պատմություն, հանդիսանում են սեմականից կատարված հ.-ե. հնագույն փոխառություն [Հմմտ. Զահորեան 1987, 450]:

Ըստ այսմ, հայ. (բրբ.) *սոմել* բառը համալրում է «ֆիզիկական տարրեր գործողություններ և սրանց հարաբերությունը առանձին արվեստների ու արհեստների հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով ու արտադրանքներով» բառիմաստային (թեմատիկ) խումբը [Հմմտ. նույն տեղում, 213-214 և այլն]:

### Հայ. *աշան* < հ.-ե. \**(e)s-en*

1. Հայերենի հնագույն բառապաշարի շատ երևույթներ պահպանվել են կամ զրական լեզվում՝ հազվադեպ, առանձնակի կիրառությամբ, կամ որոշ բարբառներում՝ իբրև նեղ գործածության անվանում: Այդպիսին են նաև գյուղատնտեսության (Երկրագործության) բնագավառին վերաբերող որոշակի թվով բառեր, որոնք իբրև բերքահավաքի հետ կապված երևույթների անվանումներ, կազմում են իմաստային (թեմատիկ) ենթախումբ: Դրանք գալիս են վաղ անցյալից և հիմնականում ունեն հ.-ե. ծագում. *աշ* «օպա, նշա. ամի-ձո՞» [տես Քաջունի 3, 1892, 17], *աշան* «կալսելիք. կալսելը, կալսում», *աշարայ* (այլև *աշորայ*) «հաճար», *զարի* (<հ.-ե. \*ցիւրիօ կամ \*ց[հ]րի-) [Զահորեան 1987, 128, Գամկրելիձե, Իվանով 1984, 656], *զրիկ* (<\*զիլ-զիլ), այլև *զրոլ* (բրբ.) «մի տեսակ ընդեղեն», *դաճ* (բրբ.) «աղուն, բնադրուն, աղալու հատիկ», *կալ* (այլև *կալ-ս-ել*) «հասկը կալում ծեծել, մանրել», *կորեակ* (>*կորեկ*) «մի տեսակ հացարույս», *հաճար* «մի տեսակ հացարույս», *հասկ* «հասած ցորենի՝ զարու և այլնի ցողունի վերին մասը», *հատիկ* (<*հատ-իկ*) «սերմ, հացահատիկ», *ցորեն* (նաև *սոր-ուն*) «մի տեսակ հացահատիկ», *քիստ* «հասկի չորացած մազմզուկը» և այլն:

Այս և նման շատ բառերի մի մասը մինչև այսօր դիտվում է իբրև «անսուոյգ բառ», մյուս մասն ունի այս կամ այն սուուգաբանությունը՝ բխեցվելով տարրեր կարգի աղբյուրներից:

2. Հայ. *աշան* բառը գյուղատնտեսության (Երկրագործության) բնագավառի մի հին երևույթի անվանում է, որը կապվում է բերքահավաքի ժամանակի հետ, ենթադրում է համապատասխան աշխատանք, և հասկանալի պատճառներով այն պահպանված է հայ.

զգալի թվով բարբառներում (Արարատյան, Մուշ, Ալաշկերտ, Ղարաբաղ, Գորիս և այլն): Այդ բառից ունենք նաև *աշանել* «կալսել», հնձած զանգվածը ծեծելով հացահատիկն առանձնացնել» բայր՝ դարձյալ բրրո. մի շարք տարբերակներով (նույն բարբառներում) [Խմնա. Համբարձումյան 1997, 38]:

3. Հայ. բարբառների հին բառարաններում *աշան* բառի համար, ըստ որում ոչ ընդհանուր իմաստով, նշվում են ա) «կալսելու ցորեն», բ) «ցորենը կալը լցնելով կալսելու համար» իմաստները [Ամատոնի 1912, 384, Աճառյան 1912]: Նախկինում բառը չի արժանացել որևէ ստուգաբանության: Վերջերս *աշան*-ի ստուգաբանության անդրադարձել է Գ.-Զահուկյանը՝ բառը բացատրելով նոյն ձևով, ինչ Հ.Աճառյանը [Զահուկյան 1993, 22-23 այլև՝ 1994, 75-76]: Իսկ Ա.Մարգարյանն առարկում է և հիշյալ բացատրությանը, և ստուգաբանությանը՝ ասելով, թե այն ունի «կալի մեջ խրձերի փոփածք», իսկ նրանից կազմված *աշանել* բայր՝ «փրձերը կալի մեջ սփռելը» իմաստները [Մարգարյան 1994, 72-74]:

Անհրաժեշտ է նկատել, որ այդ բառերի համար նշվող իմաստները բավական կոնկրետ են, բխում են բարբառներում դրանց ունեցած կիրառությունից: Ուստի դրանք ոչ ամբողջովին են արտացոլում արմատի հին, նախագրային շրջանում ունեցած այն ընդհանուր իմաստը, որ վերաբերում է նաև *աշոմ* բառին, եթե ընդունենք Գ.-Զահուկյանի այն ճիշտ դիտողությունը, որ *աշան*-ը կարելի է կապել *աշոմ* բառի հետ [Ծոյթ տեղում, 22]: *Աշան* բառը նշանակում է թե՝ «կալսելիք, այսինքն՝ ոչ միայն ցորենի, այլև առհասարակ հասկերի խրձեր», թե՝ «կալսելը, կալսում, այսինքն՝ կալում այդ զանգվածի պարբերաբար շրջելը, ի մի բերելը, վերջում՝ կուտակելը»: Ըստ այդմ *աշան*-ը և *աշանել*-ը բերքահավաքի հետ կապված զյուղատնտեսական մի կարևոր աշխատանք նշանակող բառեր են. այդ աշխատանքը նախորդում է հատիկը հարդից առանձնացնելուն («երան անելուն՝ եղաններով կամ քամհարով»): Այսօր դժվար է ասել, թե իին աշխարհին բնորոշ այդ երևոյթը ինչպիսի տարեշրջանով և որ ամիսն էր լինում, ամռան վերջի՞ն, թե՝ աշնան սկզբին, թերևս տարվա (ոչ մեզ ծանոթ քառարաշխ տարեշրջանի) այն եղանակին, երբ առհասարակ տեղի էր ունենում բերքահավաքը (իին իմաստով՝ «աշնանը»):

4. Արդեն նշեցինք, որ *աշան* բառը չկա Աճառյանի ստուգաբանական բառարանում, բառի ստուգաբանության առաջին փորձը պատկանում է Գ.-Զահուկյանին: Ըստ այսմ, այդ բառը ա) որոշ

հավանականությամբ կապում է *աշուն* բառի հետ, ք) նշվում է, որ վերջինս սովորաբար համեմատում են ոուս., պրուս. և զոր. ձևերի հետ, զ) մերժվում են սլավ., բալր., գերմ. ձևերի հիման վրա վերականգնվող հ.-ե. \*es-en/r-, \*os-en/r- նախածները: Գ. Զահուկյանը միաժամանակ հիշեցնում է, որ նախկինում իր կողմից առաջարկվել է հ.-ե. \*oskhon նախածներ, «որ ամենից ավելի հավանական է, բայց անբասիր չէ» [Զահուկյան 1993, 22-23]: Այս հարցը խիստ ուշագրավ է, արժանի հետագա ավելի լայն ուսումնասիրության: Այսուհանդերձ, Գ. Զահուկյանը *աշամ* բառի համար վերականգնում է հ.-ե. \*oskhət- ձևը:

5. Կարելի է կարծել, որ հայ. (բրբ.) *աշան*-ը ծագում է հ.-ե. \*(e)s-en «հունձքի ժամանակ, ամառ» արմատից [հմնոլ. Գամկրելիդզե, Իվանով 1984, 691, 868]: Հ.-ե. \*(e)s-en ձևը վերականգնող հեղինակները տախու են ցեղակից լեզուների հետևյալ զուգահեռները. հուն. (հուն.) ծովածք «ամառվա վերջ», «աշուն», «հունձքի ժամանակ», զոր. asans «հունձք», «ամառ», հվերմ. aran «հունձք» (զերմ. Ernte), պրուս. assanis «աշուն», հիսլ. զոռ «հունձք», հունու. օսենի (ներգոյ. հոլ. օսեն «աշնանը»), խեթ. zena- «աշուն» (տր.-ներգոյ. հոլ. zeni «աշնանը») [Մույն տեղում, 691]: Ամենայն հավանականությամբ հ.-ե. \*(e)s-en արմատից է ծագում նաև հայ. (բրբ.) *աշան*, *աշանել* և այլն բառերի *աշամ* արմատը:

### Հայ. թանձր < հ.-ե. \*t'ns-u-

1. Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ուսումնասիրության համար որքան էլ կարևոր են ժամանակի լըթացքում ստուգաբանված բառերը, որանք չեն կարող ամրողովին հիմք հանդիսանալ նորագույն հետազոտությունների համար, եթե չեն համալրվում նոր ստուգաբանություններով, առավել ևս նախկինում ստուգաբանված բառերի ծագումնային ու տիպաբանական ճշգրտումներով: Այս տեսակետից կարելի է ասել, որ հայ. կան նախկինում բազմից ստուգաբանված բառեր, որոնք այնպես էլ չեն արժանանում վերջնական հավաստիության: Այդպիսին է, օրինակ, հայ. *թանձր* («թավ, խիտ, հոծ, ստվար») բառը, որն ստուգաբանության է առնվել մի շարք հետազոտողների կողմից, սակայն նորագույն տվյալներով այդ բառը կարելի է ծագած համարել հ.-ե. այնպիսի արմատից, որը ենթադրում է հնչյունական փոքր-ինչ այլ կազմություն:

2. Հայ. թանձր բառի ծագումն, ինչպես սասցինք, առայժմ վերջնական քննարկված չէ, բանի որ տարբեր ժամանակներում այն

բխեցվել է հ.-ե. այլայլ ձևից՝ պայմանավորված արմատի կազմում տարրեր կարգի բաղաձայն տարրերի վերականգնման հետ:

2.1. Հայ. *քանձր* բառն ունի ստուգաբանության երկարատև պատմություն, որ պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ մինչաճառյանական և հետագա:

ա) Առաջին փուլում կարեռ է համարվել Հ.Հյուրշմանի ստուգաբանությունը, որի համաձայն հայ. *քանձր*-ը ծագում է հ.-ե. \*tenk-ից (Hübschmann 1895, 448): Դա ընդունում է Հ.Աճառյանը, սակայն առանձնացնում է \*tng'-ի- նախաձեր (Աճառյան 2, 1973, 152-153): Հետագա ստուգաբանություններից, ինչպես նշում է Գ.Զահուկյանը, ուշագրավ է Գ.Զոլտայինը: Հայ. *քանձր* բառի եզ. սեռ. *քանձու* ձևը, իբրև հ.-ե. հիմքի ձայնավոր կրող մի ձև, նա «ամենից ավելի մոտ է համարում լիտվ. tankus «խիտ, հաճախակի» «քառին» (Զահուկյան 1987, 197, այլև Solta 1960, 223):

բ) Այս հարցում բոլորովին այլ է Գ.Զահուկյանի մոտեցումը: Նա գտնում է, որ հ.-ե. \*tenk-ը և \*thengh-ը այլ բան չեն, քան \*ten- «ձգել» արմատի \*-k- և \*-gh- աճականներով ձևերը, [նույն տեղում, հմնտ. Սուրբիայան 1986, 91,161], այլև տալիս է հ.-ե. \*thengh- «արմատական ձևերից» և «հատկապես հայերենի համար համեմատական տվյալներով վերականգնվող \*tng'-ի- կամ \*tng'h'-ի- ձևից բխող *քանձր*-ը: Ընդ որում այդ ձևերը Գ.Զահուկյանը նշում է հարցականով, այսինքն՝ դրանք դիտում է «կասկածելի համարվող նախաձեր» (Զահուկյան 1987, 152, այլև 109):

2.2. Մինչև այժմ ասվածից հետևում է, որ հայ. *քանձր* բառի հ.-ե. ծագումը կասկած չի հարուցում: Եվ բվում է, թե վերջնական է նաև բառի ստուգաբանությունը: Սակայն հետագայում, հատկապես Գ.Զահուկյանի կողմից հարցականի տակ է դրվում այդ ստուգաբանությունը:

Ուստի հարկ ենք համարում շեշտել, որ Հ.Հյուրշմանը ժամանակին ստուգաբանում է *քանձր* բառը, նշում նրա հ.-ե. հնարավոր նախաձերը: Հ.Աճառյանն ընդունում է այդ ստուգաբանությունը և եզրակացնում, որ ցեղակից լեզուների զուգահեռ ձևերը «երեան են հանում հնիս. \*tng'ս-, որ հայերենի մեջ պիտի տար *քանզր*»: Այսուհետև անմիջապես ավելացնում է, թե «մեր *քանձր* բառը ծագում է հնիս. \*tng'h'- ձևից» [նոյն տեղում]: Այնինչ, Գ.Զահուկյանը, որ այդ բառի ստուգաբանության անդրադառնում է ավելի ուշ, ոչ ավելի վաղ գրված աշխատություններում [Ջայական 1967, այլև 1982, Զահուկյան 1987], նշում է այդ ձևին (\*tng'h-)

զուգահեռ մեկ այլ ձև (\*տղ'հլս-)՝ հիմքակազմ ձայնավորին նախորդող ձայնորդիվ հանդերձ, և երկուսն էլ դիտվում են կասկածելի, այն է՝ նշվում են հարցականով:

Հարցի լուծմանն այսօր նպաստում են ցեղակից լեզուների նոր տվյալները: Սակայն մինչև դրանց անդրադառնալը հիշենք, որ այդպիսի զուգահեռներ ժամանակին նշել եր ՀՀյութշմանը, որոնք թերևս հատուկ ուշադրության չեն արժանացել: Այդպես և Հ.Աճառյանը, որ դրանք բերում է իր «Արմատական բառարանում»: Վերջապես, Յու.Պոկոռնու բառարանում նշվում են նաև հետևյալ տվյալները. ավեստ. թանց- (թանյասոնէ) «ձգ(տ)ել, քա(ր)շել», լատ. տեմօ, եզ. սեռ. տեմոնիս «լծասարք», հիսլ. րունց «փիտ, հոծ» և այլն [Pokorny 1-2, 1959-1969, 1067-1068]: Եվ Գ.Զոլտան ժամանակին ավելացնում է ցեղակից լեզուներից մեկի՝ լիտվ. tankus զուգահեռը, որով և սկսվում է վերանայվել բանձր բառի ցեղակցական կապն այլ լեզուների հետ:

2.4. Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ Հ.Աճառյանն այս զուգահեռները դիտում է համեմատելի հայ. մի այնպիսի ձևի հետ, ինչպիսին պիտի եղած լիներ նախագրային շրջանում վերականգնելի **\*բանզր** բառը նույն իմաստով: Այնինչ ավելի ուշ՝ գրավոր շրջանում ունենք այլ ձևով ավանդված **բանձր** բառը: Հարց է առաջանում, թե հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում, հատկապես նախագրային շրջանում ներքին վերականգնումով հնարավո՞ր է հաստատել հայ. **\*բանզր>բանձր** փոփոխությունը (\**q>σ* անցում, այսինքն՝ պայքարանին հավելյալ շփական հատկանիշի օժտում):

Այս առումնվ կարելի է նշել հետևյալը:

ա) Այդ ենթադրությունը թերևս կառուցված է հ.-ե. \**g>* հայ. *Ժ* համապատասխանության հնարավոր գոյության վրա. *Խմնո.* հ.-ե. \**b[h]rg[h]-u>* հայ. **բարձ-ր**, հ.-ե. \**g[h]alg[h]->* հայ. **ծաղկ** «զավազան», հ.-ե. \**g[h]iem-s>* հայ. **ծմեռ-ն** և այլն:

բ) Հակառակ դեպքում հայ. **բանզ-**ը թերևս կարելի լինի կապել հայ. **բանզուզել** «ամորից կամ վախից քաշվել, փախչել» (ըստ Զախօսիյանի բառարանի). *Խմնո.* Ս.Գիրք, Յոր ԺԴ, 8 հուն. ՚ ։ Ն ՛ Ո Պ Օ Տ Ե Լ Ե Տ Ը Ե «Փախից կամ ակնածանից քաշվել», այլև **բանկուզի** «անկար, փորանելյալ» բառերի հետ՝ դրանց համար առանձնացնելով «խտանալ, սեղմվել» ընդհանուր իմաստը, և ինչպես գիտենք, հայ. **բանզ-**ը դիտվում է փոխառյալ պարսկ. *tang-hg* [Աճառյան 2, 1973, 151-152]:

3. Հայ. **բանձր** բառը ծագում է բոլորովին այլ, այն է՝ հ.-ե. \**t'ns-u-*

«քավ, հոծ, խիտ, քանձր» ձևից, որին զուգահեռ են խեթ. daššu- «ուժեղ», որի համար վերականգնվում են \*da(n)su- < \*dgsu- ձևերը, այլև հուն. δασός «հոծ, քանձր», լատ. dēnsus «խիտ» ձևերը [տեսն Գամկրելիդզե, Իվանով 1984, 200]: Նշենք նաև խեթ. dankuli<dankui «քանձր, խիտ» ձևը [Իվանով 1977, 26]:

3.1. Հ.-Ե. \*t> հայ. թ, այլև \*ŋ> հայ. ան համապատասխանության համար նշենք հետևյալ զուգահեռները. ա) հ.-Ե. \*t'el-> հայ. թեղ «երկար, կույտ», pēl-ēm «երկարությամբ կուտակել». հմմու. հսլավ. -di-liti «երկարել», ոուս. ձլիւ, հիալ. talma «կանգնեցնել, կասեցնել» [տեսն Գամկրելիդզե, Իվանով 1984, 230, Զահուկյան 1987, 158], բ) հ.-Ե. \*bəndh-s-> հայ. (պա)պանձ- «համրանալը», այլև պապանձի «պապանձվել» և այլն:

3.2. Խսկ հ.-Ե. \*s> հայ. ժ համապատասխանությունն առանձին հետազոտության խնդիր է՝ կապված հ.-Ե. պայքական բաղաձայնների հայ. արտացոլումների, ինչպես նաև դրանց վերաբաշխման և հարակից հարցերի հետ:

3.3. Վերջապես, հ.-Ե. \*t'ηs-ս- ձևում առկա է հիմքի ստարը, որ հայերենում հանդես է գալիս բառի թեր ձևերում, եզ. սեռ.՝ քանձ-ու «քանձրի», հոգն. ուղղ. քանձ-ու-նը «քանձրեր», խսկ եզ. ուղղ. ձևում չի պահպանվել հայտնի պատճառներով:

Ըստ այդմ կարելի է կարծել, որ հայ. քանձր բառը ծագումնարանորեն առնչվում է ոչ թե հ.-Ե. \*tηg'hu, այլ \*t'ηs-ս- ձևին:

## ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

- աղալ 31, 32, 33  
աղախիմ 31  
աղաւնիճ 33, 34  
աղաւրի 31, 32  
աղիջ (աղիճ) 30, 31, 32, 33, 34  
աղխ 31  
աղջիկ 29, 30, 31, 32, 33, 34  
ամբողջ 23  
անգիւն (անկիւն) 24, 26  
անդ 46  
աշ 51  
աշան 29, 50, 51, 52, 53  
աշանել 51, 52, 53  
աշարայ 51  
աշորայ 51  
աշուն 52  
ապախուրել 40  
արածել 42, 43, 45  
արատ 42, 43  
արաւտ 42, 43, 45  
արաւր 46  
արբեն 24, 26  
արդ 26  
արեգակն 10, 37  
արձալ (բրբռ.) 42, 43  
արտ 42, 43  
արտ «դուրսը» 39  
արտ «դաշտ» 40, 41, 43, 46  
արտախոյր 29, 39, 40, 41, 46  
արտախուրակ 40  
ապախուրել 40  
արտիճ 33, 34  
աւազ 25  
աւղ «կոշիկ» 23  
աւղ «օդ» 25  
աւղ «օքեան» 26  
բան 23  
բանամ 23  
բարձր 55  
բարտի 45  
բեկանեմ 25  
բերեմ 25  
բոյժ 42  
բուծանեմ 42  
բուտ 42  
բուել 42  
զարի 46, 51  
զարշ 23  
զես 25  
զերի 45  
զի «ծառ»  
զիհի 27  
զինդ 24, 26  
զինի 27, 45  
զլգիլ (բրբռ.) 51  
զլուլ (բրբռ.) 51  
զ'ալ (զ'ալգ'ալի) 29, 37, 38, 39  
զոմ 25  
դալ (դայլ) 26, 39  
դալար 23, 26  
դան (բրբռ.) 51  
դառնամ 23  
դիել 26  
դ(ի)նեմ 25  
դիք «աստվածներ» 45  
դոփեմ 24  
եղան 46  
եղբայր 23

- Երեկոյ 26  
 Երեւիմ 26  
 Երեք 23  
 Երկան(ը) 12,17,50  
 Երբն 23  
 Եփեմ 26  
 Քանամ 25  
 Քանգ 55  
 Քանզուզել 55  
 Քանզը 54,55  
 Քանկովի 55  
 Քանձր 29,53,54,55,56  
 Քել (բրո.) 55  
 Քեղեմ 55  
 Քերեմ 26  
 Ք(ի)ռչեմ 26  
 Լուիճ 33,34  
 Լ(ի)քանեմ 26  
 Խածանեմ 23  
 Խայթեմ 25  
 Խայծ 42,45  
 Խայտ 42,45  
 Խաւ 42,43,45  
 Խաւարծ 45  
 Խաւարծի 29,44,45,46  
 Խաւարտ 29,42,43,45,46  
 Խաւարծիլ (բրո.) 45  
 Խեղոլ 42  
 Խոյր 40,41  
 Ծածանեմ 42  
 Ծաղիկ 30  
 Լաք 26  
 Լալ (կալսել) 51  
 Լաղց (բրո.) 26  
 Լամահարել 47  
 Լամասայլ 47  
 Լամն 29,46,47,48  
 Լամնահար 47  
 Լապիծ 33  
 Լարք 26  
 Լաւ 34  
 Լաւիճ 33,34  
 Լոպար 34  
 Լոպիճ 33,34  
 Լով 25  
 Լորեակ (լորեկ) 51  
 Լորի 46  
 Լուոն 25  
 Հաճար 51  
 Հասկ 51  
 Հատիկ 49,51  
 Հատիճ 33,34  
 Հեղճ 42  
 Հեղում 25  
 Հետոյ 23  
 Հերկ 46  
 Հինգ 23,26,38  
 Հպարտ 42  
 Ճագ 25  
 Ճաղկ 55  
 Ճմեռն 55  
 Ճախարակ 37  
 Ճախր 37  
 Ճմլել 47  
 Մալ 33  
 Մալել 33  
 Մամոլ 33  
 Մայր 23,26  
 Մայր (մարել) 39  
 Մայրի 45  
 Մանուկ 30  
 Մեղկ 33

# ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. Լեզուների և բարբառների

ազն.	ազներեն (բրբո., թոխԱ)
ալբ.	ալբաներեն
անգլ.	անգլերեն
ավեստ.	ավեստերեն
արար.	արաբերեն
արամ.	արամերեն, -ական
արադ.	աքադերեն
աֆղան.	աֆղաներեն
բենգալ.	բենգալերեն
գերմ.	գերմաներեն, -ական
զոք.	զոքերեն
զան.	զաներեն
թոխ.	թոխարերեն, -ական
լատ.	լատիներեն
լատվ.	լատվիերեն (լատիշերեն)
լիտվ.	լիտվերեն
խեր.	խերերեն
խոտ.-սակ.	խոտանասակերեն
հայ.	հայերեն
հանգլ.	հին անգլերեն
հ.-ե.	հնդեվրոպական
հիեր.լուվ.	հիերոգլիֆյան լուվերեն
հինդ.	հինդու
հիոն.	հին իուլանդերեն
հիսու.	հին իսլանդերեն
հինդկ.	հին հնդկերեն
հիք.	հին հրեերեն
հնիս.	հնդեվրոպական նախալեզու
հչին.	հին չինական
հպարս.	հին պարսկերեն
հռուս.	հին ռուսերեն
հոլավ.	հին սլավոներեն

հսկանդ.	հիճ սկանդիճավյան
հվգերմ.	հիճ վերին գերմաներեն
հուն.	հունարեն
հուն. (հոմ.)	հունարեն (հոմերոսյան)
ճան.	ճաներեն
մեզը.	մեզըելերեն
մսգերմ.	միջին ստորին գերմաներեն
շում.	շումերերեն
պահլ.	պահլավերեն
պարբ.	պարբերեն
պարսկ.	պարսկերեն
պրու.	պրուսերեն
ռուս.	ռուսերեն
սեմ.	սեմական (լեզուներ)
սլավ.	սլավոներեն
սկյութ.	սկյութերեն
Վրաց.	վրացերեն
ուգար.	ուգարիտերեն
փոյուգ.	փոյուգերեն
քուչ.	քուչաներեն (քրո., քոխ. Բ)
օս.	օսերեն

## 2. Քերականական տերմինների

բրբո.	բարբառ(ային)
հայց.	հայցական
հոգն.	հոգնակի
հոլ.	հոլով
ներգոյ.	ներգոյական
սեռ.	սեռական
տր.	տրական
ուղղ.	ուղղական

## 3. Գիտական հանդեսների

ԲԵՀ	«Բանբեր Երևանի համալսարանի»
ԵՊՀԳԱ	«Երևանի պետական համալսարանի գիտական

	աշխատություններ»
ՀԳԱՏ	ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների սերիա)
ՊԲՀ	«Պատմա-քանափրական հանդես»
ВДИ	“Вестник древней истории”
ВЯ	“Вопросы языкоznания”
МСАЯ	“Международный симпозиум по армянскому языкоznанию”
CA	“Советская археология”
FDS	“Festschrift Prof. Dr.Dora Sakayan zum 65 Geburtstag”
JIES	“Journal of Indo-European studies”
REA	“Revus des études arménianes”
SA	“Sprachwissenschaftliche Abhandlungen”

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1. Բառարաններ

Աճառեան Հ. Հայերէն գալառական բառարան, «Էմինեան ազգագրական ժողովածու», Մոսկով, 1911, 6:

Աճառյան Հ. Հայերէն արմատական բառարան, 1-4, Երևան, 1971-1979:

Ամառունի Ս. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Ազերէան Մ. Նոր բառզիրք հայկագեան լեզուի, 1-2, Վենետիկ, 1836-1837:

Երեմիա Մեղրեցի, Բառզիրք հայոց, Յալիկօննայ, 1698, այլև Երևան, 1975:

Մալխասեան Ստ. Հայերէն բացատրական բառարան, 1-4, Երևան, 1944-1945:

Միփրար Սեբաստացի, Բառզիրք հայկագեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1749:

Քաջունի Մ. Բառզիրք արտեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, 1-3, Վենետիկ, 1892:

Фасмер М. Этимологический словарь русского языка, 1-4, М., 1986-1987.

Berneker E. Slavisches etymologisches Wörterbuch, Heidelberg, 1908-1913.

Boisacq F. Dictionnaire étymologique de la langue grecque, Paris, 1923.

Buck C.D. A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages, Chicago, 1949.

Pokorny J. Indogermanisches Etymologisches Wörterbuch, 1-2, Bern-München, 1959-1969.

### 2. Գրավոր աղբյուրներ

Ազարանգեղոս, Պատմոթին Հայոց, Թիֆլիս, 1909:

Եսերեսոս Կեսարացի, Ժամանակականը, Վենետիկ, 1818:

Զաքարիա Սարկանազ, Պատմոթին, Վաղարշապատ, 1870:

Լալյենան Երուանդ, Ազգագրական հանդէս (պատկերազարդ), 5, Տիֆլիս, 1916:

- «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914:
- «Սանրուստմն», իրատ. «Արարատ» ամսագիր, 1894:
- Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
- Յովհան Ռոկեբերան, յԱւետարանագիրն Մատթեոս, 1-2,  
Վենետիկ, 1826:
- Սուրբ Գիրք. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր  
Կտակարանաց, Կ.Պոլիս, 1895:
- Տիմոքէոս Կուզ, Հակաճառութիւն, Էջմիածին, 1908:
- Փաւատոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, Երևան, 1987:
- ### 3. Օգտագործված գրականություն
- Աբրահամյան Ա.Ա. Բառաքննական դիտողություններ, ՀԳԱՏ,  
1958, 4 :
- Աղայան Է.Ք.Հին Հայերենի հնչույթային համակարգի  
պատմությունից, ՊԲՀ, 1961, 2:
- Աճառյան Հ. Հայերեն ստուգաբանություններ., Հանդես  
ամսօրեայ,, , 1908:
- Աճառյան Հ. Հայոց լեզվի պատմություն, 1-2, Երևան, 1940-1951:
- Աճառյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, 3,  
Երևան, 1957:
- Այվազովսկի Գ. Յաղագս հնչման Լ տառին, Թէոդոսիա, 1852:
- Այտրնեան Ա. Ջննական քերականութիւն աշխարհաբար կամ  
արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
- Համբարձումյան Վ.Գ. Գրաբարի գործառությունը որպես  
գրական լեզու ԺԸ-ԺԸ դդ., Երևան, 1990:
- Համբարձումյան Վ.Գ. Մովսէս Խորենացու Պատմության  
«Տենչայ Սարենիկ տիկին» հատվածը, ՊԲՀ, 1995, 2:
- Համբարձումյան Վ.Գ. Հայոց լեզվի պատմության  
ուսումնախրության արդի խնդիրները, FDS, 1996, 1:
- Համբարձումյան Վ.Գ. Հայերեն ստուգաբանություններ, ՊԲՀ,  
1996, 1-2:
- Համբարձումյան Վ.Գ. Հ.-Ե. պայրական բաղաձայնների  
տեղաշարժի «ոչ - լիարժեք» արտացոլումը հայերենում,  
«Նշանագիտություն և լեզուների դասավանդում. թեզիսներ»,  
Երևան, 1996:
- Համբարձումյան Վ.Գ. Հայերեն աղջիկ բառի  
ստուգաբանություններ. «Ալիջազգային գիտաժողով՝ նվիրված

- Ա.Սեյեի ծննդյան 180-ամյակին» , գեկուցումների թեզիսներ, Երևան, 1996:
- Համբարձումյան Վ.Գ. Հայերեն աղջիկ բառի ստուգաբանությունը, ՊԲՀ, 1997, 2:
- Համբարձումյան Վ.Գ. Հայերեն աշան բառի ստուգաբանությունը. «Գիտաժողով՝ նվիրված Գ.Զահուկյանի ծննդյան 77-ամյակին», գեկուցումների թեզիսներ, Երևան, 1997:
- Մարգարյան Ա.Ս.«Աշան» բառի այլ ստուգաբանության փորձ, ԲԵՀ, 1994, 2:
- Մարտիրոսյան Հ.Ա. ՈՒշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969:
- Մեյն Ա. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:
- Զահուկյան Գ.Բ. Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը, ԵՊՀԳԱ, 1956, 57:
- Զահուկյան Գ.Բ. Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:
- Զահուկյան Գ.Բ. Ստուգաբանություններ, ՊԲՀ, 15:
- Զահուկյան Գ.Բ. Հայերենը և հնդեւկրոպական հիմ լեզուները, Երևան, 1970:
- Զահուկյան Գ.Բ. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
- Զահուկյան Գ.Բ. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
- Զահուկյան Գ.Բ. Ստուգաբանություններ. ԲԵՀ, 1993, 2:
- Զահուկյան Գ.Բ. Դիտողություն մի դիտողության առթիվ, ԲԵՀ, 1994, 2:
- Սուրիասյան Հ.Վ. Աճականը հայերենում, Երևան, 1986:
- Վարդանյան Ա. Բառաքննական նոր դիտողություններ. «Հանդէսամօրեայ», 1921, 7-8:
- Տեր-Մկրտչյան Գ. Հայագիտական ուսումնասիրություններ, Ա, Երևան, 1979:
- Абаев В.И. О принципах этимологического исследования. В кн.: “Вопросы методики сравнительно-исторического изучения индоевропейских языков”, М., 1956.
- Абаев В.И. Скифо-европейские изоглоссы. На стыке Востока и Запада, М., 1965.
- Гамкрелидзе Т.В. Индоевропейская “глоттальная теория” и система древнеармянского консонантизма, МСАЯ, 1984.

- Гамкрелидзе Т.В., Иванов В.В. Древняя Передняя Азия и индоевропейская проблема, ВДИ, 3, 1980.
- Гамкрелидзе В.В., Иванов В.В. Миграции племен носителей индоевропейских диалектов, ВДИ, 2, 1981.
- Гамкрелидзе Т.В., Иванов В.В. Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, 1-11, Тбилиси, 1984.
- Джаукиян Г.Б. К вопросу о происхождении консонантизма армянских диалектов, ВЯ, 1960, 6:
- Джаукиян Г.Б. Урартский и индоевропейские языки, Ереван, 1963.
- Джаукиян Г.Б. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964.
- Джаукиян Г.Б. Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.
- Джаукиян Г.Б. Индоевропейская фонема \*b и вопросы реконструкции индоевропейского консонантизма, ВЯ, 1982, 5.
- Джаукиян Г.Б. Общее и армянское языкознание, Ереван, 1978.
- Джаукиян Г.Б. Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982.
- Джаукиян Г.Б. Об этимологических дублетах и параллелях в армянском языке, МСАЯ, 1984.
- Иванов В.В. К истории древних названий металлов в южно-балканском, малоазийском и средиземноморском ареалах. В кн. "Славянское и балканское языкознание: Античная балканистика и сравнительная грамматика", М., 1977.
- Иванов В.В. Первоначальная глубинная структура текста гимна Вахагну и проблемы древнеармянской этимологии, МСАЯ, Ереван, 1984.
- Иллич-Свитыч В.М. Один из источников начального X в праславянском, ВЯ, 1961, 4.
- Мнацаканян А.О. Древние повозки, СА, 1960, 2.
- Нерознак В.П. Индоевропейские языки. В кн. "Сравнительно-историческое изучение языков разных типов", М., 1981.
- Патканян К. Материалы для армянского словаря, 1, СПб.,

1882.

- Периханян А.Г. Материалы к этимологическому словарю древнеармянского языка, Ереван, 1993.
- Пиотровский Б.Б. Ванское царство (Урарту), М., 1959.
- Широков О.С. Кавказско-индоевропейские фонологические сходства, “Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков”, М., 1972.
- Широков О.С. Палеобалканские этнические связи по данным фригийской лексики. В кн.: “Сравнительно-историческое изучение языков разных типов”, М., 1991.
- Barton R. Armenian malem, małem, ałam and the PIE verb “grind”, FDS, 1996, 1.
- Benveniste E. Hittite et indo-européen, Paris, 1962.
- Benveniste E. Le vocabulaire des institutions indo-européennes. 1. Economie, parenté, société, 2. Pouvoir, droit, religion, Paris, 1969:
- Bomhard A.R. A new look at Indo-European, JIES, 1981.
- Brugmann K. Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen, Strassburg, 1904.
- Djahukian G.B. Die archaischen Schichten armenischer Dialektwörter, “*Studia Linguistica Diachronica et Synchronica*”, 1985.
- Djahukian G.B. A Variational Model of the Indo-European Consonant System, “Historische Sprachforschung (Historical Linguistics)”, 1990, Band 103.
- Djahukian G.B. Variative Modelle des urindoeuropäischen und der Begriff der partiellen parallelen (isoglossen), “*Studia indogermanica*”, 1997, 1.
- Fourquet G. Les mutations consonantiques du germanique, Paris, 1948.
- Jahukyan G.B. L’étymologie des mots haraw “sud”, hiwsis(i) “nord” et le système d’orientation des anciens arméniens, REA, t. XX, Paris, 1986-1987.
- Jahukian G.B. The armenian suffixes of iranian origin, “Comparative-Historical Linguistics: Indo-European and Finno-Ugric”, Amsterdam-Philadelphia, 1993.
- Hamp E. P. Gothic IUP “ꝜvꝜ”, “Modern Language Notes”, 1954, 1.
- Haudricourt A.G. Les mutations consonantiques (occlusives) en

- indoeuropéen. "Mélanges Linguistiques offerts à Emile Benveniste", Louvain, 1975.
- Hopper P.J. Glottalized and murmured occlusives in Indo-European, "Glossa", 1973.
- Hopper P.J. The typology of Proto-Indo-European segmental inventory, JIES, 1977, v. 5, no. 1.
- Hübschmann H. Armenische Studien, Leipzig, 1883.
- Hübschmann H. Armenische Grammatik, 1-2, Leipzig, 1895-1897.
- Hübschmann H. Zur Chronologie der armenischen Vokalgesetze, SA, 1, 1898.
- Kortlandt F. Notes on Armenian historical phonology, 11, The second consonant shift, "Studia Caucasică", 1978, 4.
- Lagarde P. Armenische Studien, Gottingen, 1877.
- Littauer M.A., Grouwel J.H. Terracotta models as evidence for vehicles with tilts in the Anncient Near East. "Proceedinge of the Prehistoric Society", XL, 1974.
- Littauer M.A., Grouwel J.H. Chariots with Y-poles in the Ancient Near East. "Deutsches Archäologisches Institut", H. 1, Berlin, 1977, 1-
- Meillet A. Remarques étymologiques, REA, 4, 1924.
- Meillet A. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936.
- Meillet A. Etudes de Linguistique et de philologie arméniennes, 1, Lisbonne 1962, 2, Louvain, 1977.
- Pedersen H. Die gemeinindoeuropäischen und die vorindoeuropäischen Verschusslaute. "Det Kgl. Danske Videnskabernes Selskab", XXXII, 5, 1951.
- Schmitt R. Die Hesychglosse σάτιλλα, "Glotta", 44, 1967.
- Szemerényi O. Syncope in Greek and Indo-European and the nature of Indo-European ablaut, "Instituto Universitario Orientale", Napoli, 1964.
- Solta G.R. Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Wien, 1960.
- Solta G.R. Die armenische Sprache. "Handbuch der Orientalistik", Leiden-Köln, 1963.
- Zabrocki L. Usilinienie i lemieja w językach indoeuropejskich i w ugrofimskim, Poznań, 1951.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան.....	5
Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության արդի խնդիրները.....	7
Հ.-Ե. պայքարական բաղաձայնների ոչ լիարժեք արտացո- լումը հայերենում -----	19
Հ.-Ե. ծագման հայերեն բառերի ստուգաբանություն _____	27
Հայերեն բառերի ցանկ _____	56
Համառոտագրություններ _____	59
Գրականության ցանկ -----	62

### Վ.Համբարձումյան

Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության

Պատվեր 9

Տպաքանակ 500

---

Տպագրված է ՀՀ ԳԱԱ գիտական տեղեկատվության կենտրոնի  
տպագրական տեղամասում: Երևան 1, Արովյան 15:



[500g/m<sup>2</sup>]

A II  
84704